





H | A P M.
2-1152a

ՊԵՐՏԵԴԻՐ ԵԳՐՈԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Ե ՀԻՍՀ ՄԵԶԼՐՈՒ
ԾՐՋԳՈՐԾԿՈՄԻ 1938 ԹՎԻ
ՄԱՐՏԻ 20-Ի ՆԻՍՏՈՒՄ

A 7993



4940

ՊԱՐՏԱԴԻՐ ՎՈՐՈՇՈՒՄ № 3

20-Ն ՄԱՐՏԻ 1938 Թ.

ՄԵՂՐՈՒ ՇՐՋ. ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ 1938 Թ. ՄԱՐՏԻ 20-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

Խաղաղի, պսղատու այգիների, քրագործության, դառնալարության յեվ բանջարաբուծության կուլտուրաների բերեցավորությունը բարձրացնելու յեվ մեղակությունը բարձր վերակալ կառարելու համար օրջանային գործադիր կոմիտեն վորոշում է՝

Պարտավորեցնել՝

1. Խաղողի և պտղատու այգիներ ունեցող—թթաստաններ, դաշտավարական ու բանջարանոցային կուլտուրաներ մշակող բոլոր կուլեկտիվ տնտեսություններին, կոլտնտեսականներին, մենատնտեսներին և հիմնարկներին 1938 թվի ընթացքում նշած կուլտուրաները մշակել շրջագործկոմի կողմից հաստատված խաղողի ու պտղատու այգիների՝ թթաստանների, դաշտավարության ու բանջարաբուծության պարտադիր ագրոկանոնների համաձայն:

2. Հողբաժին, գյուղխորհուրդներին և կոլտնտվարչություններին—մասսայականացնել կոլտնտեսության ընդհանուր հասարակական ժողովներում ու առանձին բրիգադաներում:

3. Հողբաժին ու գյուղխորհուրդներին—խիստ

հսկողութիւնն սահմանել ագրոկանոնները ճշգրիտ և բարձր վորակով կատարելու:

4. Ագրոկանոնները վորեւ կետը խախտողներին յենթարկել պատասխանատւության վարչական կարգով—տուգանքի մինչև 50 ռուբլի կամ հարկադիր աշխատանքի մինչև 15 օր:

5. Ագրոկանոնները չարամտորեն խախտողներին յենթարկել դատական պատասխանատւության:

6. Գյուղխորհուրդների վորոշումների դեմ կարելի չէ բողոքարկել շրջգործկոմին 7 օրվա ընթացքում:

7. Սույն վորոշումն ուժի մեջ է մինչև 1938 թ. դեկտեմբերի 31-ը:

Շրջանային գործադիր կոմիտեի նախագահ՝

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Շ. Գ. Կ.-ի բարձուղար ՍԱՐԳՍՅԱՆ

ՊԱՐՏԱԴԻՐ ԱԳՐՈՎԱՆՈՆՆԵՐ

ՊՏՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Շրջանում պտղատու այգիներ ունեցող կուլեկ-
տիվ տնտեսությունները, կուտնտեսականները, մենա-
տնտեսները և հիմնարկները պարտավոր են իրենց
այգիները մշակել լրիվ և բարձր վորակով, կիրառելով
հետևյալ ագրոձեռնարկումները:

ՆՈՐԱՏՈՒՆԿ ԱՅԳԻՆՆԵՐ

1. Նորատունկ այգիները հիմնելու համար հատուկ
հանձնաժողովի միջոցով ընտրել և առանձնացնել հա-
մապատասխան հողամասեր, ըստ վորումնկատի ունենալ՝

ա) տվյալ հողամասի հետագա ընդարձակման
հնարավորությունը:

բ) վորոգման հնարավորությունը:

գ) շորաքար և ճահճային հողամասերում չի թույ-
լատրվում նորատունկ այգիներ տնկել:

2. Նորատունկ այգու հողամասն ընտրելուց հե-
տո՝ մաքրել քարերից և ապա կատարել խոր վար
25—30 սմ. խորությամբ և կատարել հողամասի գծա-
գրում (разбивка) վերածելով այն քառակուսի կտոր-
ների, իսկ լանջոտ վայրերում ըստ ուլյեֆի:

3. Կարճեվանի դուզում և նոր յուրացվելիք հողա-
կտորներում նոր տնկվելիք այգիների ուժեղ քամա-

հար հողակտորներում քամու հոսանքին դեմ տնկել քամու դիմադիր ծառեր (թթենի, բարդենի, փշատենի և այլն). ըստ վորում դեպի այգին առաջին շարքում տնկել թթենիներ, 2-րդ շարքում փշատենի, իսկ 3-րդ շարքում բարդենի: Ծարքերի հեռավորությունները վերցնել 1,5 մետր, իսկ շարքերում ծառերի հեռավորությունը միմյանցից՝ բարդենու համար 1 մետր, իսկ մյուսների համար 1,5 մետր, տնկումները կատարել շախմատային ձևով:

4. Նոր յուրացվելիք հողամասերում ծառատնկման համար փոսեր փորել 60—80 սմ. լայնությամբ և 40—50 սմ. խորությամբ, իսկ յուրացված հողերում 50—60 սմ. լայնությամբ և 40—50 սմ. խորությամբ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Գարնանը տնկվելիք ծառերի փոսերը փորել աշնանից, իսկ աշնան ծառատնկման փոսերը փորել տնկումից առնվազն մեկ ամիս առաջ:

5. Տնկումից 15 ուր առաջ փորած փոսերը կիսով չափ լցնել հողի վերին շերտի հողով. ապա լցնել 5—8 կգ. փտած գոմաղբ և խառնել հողի հետ և ապա տունկը տնկել:

6. Ծառերի տնկումները կատարելիս վերցնել շարքը-շարքից և բույսը-բույսից հետևյալ հեռավորությամբ՝

Դաշտավարական	Նախ. լեռնային	Լեռ. գոտում
գոտում	գոտում	
Ծիրանի	9×9	7×7
Դեղձենի	5×5	—
Խնձորենի	9×9	8×8
Տանձենի	7×7	7×7
Սալորենի	5×5	5×5
Դամբուլ	5×5	5×5
Բալենի	5×5	4×4
Կեռասենի	9×9	8×8
Սերկիսի	6×6	5×5
		—

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այն կուտուրաները, վորոնք պատվաստված են թփային պատվաստակալների վրա, նրանց տնկման հեռավորությունները համաձայնեցնել հողբաժնի գյուղատնտեսների հետ:

7. Տնկումները կատարել քառակուսի ձևով, իսկ լանջերում շարքերով ըստ ուղյակի: Ծառատնկման համար տնկարանից փոխադրած տնկիները պահել խնամքով, խոնավ պայմաններում թեք դրությամբ, մինչև վզուկը հողով ծածկված: Տնկման ժամանակ թարմացնել տնկիների արմատները (սուր դանակով, կամ մկրատով հեռացնել ֆլասոված արմատները և կտրել արմատների ծայրերը):

8. Նոր այգի տնկելիս ղեկավարվել շրջանի (կոլխոզի) համար ընդունված ասորտիմենտի համաձայն, իսկ սորտերի դասավորումն այգում կատարել 3—4 շարք (հիմնական սորտից), վորից հետո մեկ շարքը համապատասխան փոշոտիչի սորտը, իսկ յեթի փոշոտիչը և փոշոտվողը հավասար տոկոսի յեն, այն դեպքում շարքերի դասավորումը կատարել հավասար:

9. Տնկիները տնկելուց հետո փոսերն այնպես լրցենել, վոր ջրելուց հետո հողի մակերեսը իջնելուց հավասարվի արմատավզիկին:

10. Այգիները տնկելուց հետո անմիջապես ջրել:

11. Աշնանը տնկված ծառերը, անպայման գարնանը ետել, իսկ գարնան տնկվելիք տունկերը ետել հետո տնկել:

12. Այն վայրերում, վորտեղ քամիները շատ ուժեղ են (կարճեվանի դուղ) նորատունկ ծառերի կողքին ամուր և ուժեղ հենարաններ դնել. հենարանները տնկել փչող քամու կողմից:

13. Նորատունկ պտղատու ծառերի միջշարքային տարածություններն ոգտագործել ցանելով՝ արախիս, ցածրաբուն լորագգեղեն բույսեր, բանջարանոցային կուլտուրաներ, միամյա և բազմամյա խոտաբույսեր. վերջինի դեպքում ծառերի շուրջը 1,5—2 մետր տրամագծով թողնել մաքուր, ցել, տարվա ընթացքում 2 անգամ փորել և 2—3 անգամ քաղհանել:

14. Գարնանը ծառատնկում սկսել առաջին դաշտ դուրս գալու օրից և ավարտել դաշտային գոտում 15-ը մարտի, նախալեռնային գոտում՝ ապրիլի 10-ին, իսկ լեռնային գոտում՝ ապրիլի 15-ին:

Աշնանը ծառատնկում սկսել, յերբ տնկիները հասունացել են, տերևաթափը կատարվել է: Աշնանը տնկման ավարտման ժամկետը սահմանել նոյեմբերի 15-ը:

15. Հիմնականում կորիզավորները տնկել մեկ տարվա հասակում, իսկ հնդավորները՝ 2 տարեկան հասակում:

2. ՆՈՐԱՏՈՒՆԿ ԱՅԳԻՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

16. Վաղ գարնանը, մինչև բողբոջների բացվելը ետել նորատունկ ծառերի սաղարթի ճյուղերը. ծիրանի, սալորի, կեռասի ծառերի սաղարթի ճյուղերը ետել կողային ճյուղերի կեսի չափով, դեղձենու ճյուղերը կեսի կամ մեկ յերրորդի չափով, խնձորենու և տանձենու ուժեղ աճեցողության դեպքում՝ կեռասի չափով, իսկ թույլ աճեցողության դեպքում՝ յերկու յերրորդի չափով: Կենտրոնական ճյուղը, վորը շարու-

նակությունն ե կազմում ծառի ընին, ետել 15—20 սմ. յերկար քան կողային ճյուղերը:

17. Նորատունկ այգիների ծառերի ձևավորումը կատարել հողբաժնի մասնագետների ցուցմունքներով և անմիջական ղեկավարությամբ:

18. Աշնանը և գարնանը մասսիվ հողամասերում շարքերով տնկված նորատունկ այգիներին միջշարքային տարածությունները վարել առաջին անգամ 18—20 սմ. խորությամբ. իսկ գարնանը կատարել կրկնավար 12—14 սմ. խորությամբ առանց վերքեր հասցնելու գլխավոր արմատներին, ընին և հիմնական ճյուղերին: Բների շուրջը փորել բահով 1,5—2 մետր տրամագծով:

19. Ամռան ընթացքում բների շուրջը կատարել 2—3 անգամ փխրեցում, իսկ միջշարքային տարածությունները, յեթե զբաղված չեն խոտաբույսերով կամ բանջարանոցային կուլտուրաներով փխրեցնել, քաղհանել և պահել մաքուր ցել:

20. Աշնանը և գարնանը նորատունկ այգիների վերանորոգումը համապատասխան սորտերով համարել պարտադիր:

21. Նորատունկ այգիները ջրել ըստ տվյալ գյուղի ջրի քանակի, հողային ու կլիմայական պայմանների, տեղիք չտալով նրանց չորացման դեպքերի: Ջրառատ վայրերում աշնան ջուրը դադարեցնել այն հաշվով, վոր փառացումը լրիվ կատարվի ձմրան ցրտահարություններից ապահովելու համար: Ուշ աշնանը և տերեւաթափից հետո և ձմրան սեզոնին յերաշտ տարիներին ջրել 1—2 անգամ:

3. ԲԵՐՔԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

22. Վաղ գարնանը մինչև բողբոջների արթնանալը ետել և հեռացնել հողացած շվերը, բոլոր կոտորված, չորացած, իրար խանգարող, ինչպես և դեպի սաղարթի ներսն աճած խիտ, ավելորդ շվերը:

23. Ուշ աշնանը դաշտային գոտում, կամ վաղ գարնանը բոլոր գոտիներում ծառերի բները և հաստ ձյուղերը մաքրել մեռած կեղևից, կեղևի տակը ձմեռող ֆնասատուներից և հիվանդություններից: Այդ բոլոր մնացորդները խնամքով հավաքել, դուրս բերել այգուց և այրել:

24. Գարնանը բողբոջների ուռչելուց մինչև ծաղկաթափը 1—2 անգամ ծառերը թափ տալ, բզեզները հավաքել և վոչնչացնել. լվիճները նկատվելուց, բացի քիմիական պայքարից, ձեռնարկել մեխանիկական միջոցառումներ նրանց վոչնչացնելու համար (ձեռքի միջոցով շորով սրբել):

25. Մասսիվ հողամասերում շարքերով տնկված այգիների միջշարքային տարածությունները աշնանը և վաղ գարնանը վարել գութանով: Այն այգիները, վորոնք շարքերով չեն տնկված, կամ զբաղեցված են բազմամյա խոտաբույսերով ծառերի բների շուրջը 1,5—2 մետր տրամագծով փորել թե՛ աշնանը և թե՛ գարնանը (համաձայն տված պլանի) և ազատ պահել մոլախոտերից:

26. Շարքերով տնկված այգիներում, վորտեղ միջշարքային տարածությունները զբաղեցված են բանջարանոցային կամ այլ տեխնիկական կուլտուրաներով, վեգետացիայի ընթացքում կատարել 3—4 անգամ քաղհան և փխրեցում:

27. Այն հին ծառերը, վորոնց աճը կանգ է առել, վորի հետևանքով ճյուղերը սկսում են չորանալ և պակասել բերքատվությունը, այդպիսի ծառերի նկատմամբ գարնանը կատարել յերիտասարդացում, ագրոպերսոնալի ցուցմունքներով:

28. Բերքով ծանրաբեռնված ծառերի տակը տալ նեցուկներ հունիսի վերջից սկսած, մինչև հուլիսի 25-ը:

29. Ամառվա ընթացքում սիստեմատիկ կերպով հավաքել ծառերի տակ թափած պտուղները (թափուկները) պիտանի մասը ոգտագործել տնտեսության մեջ, իսկ մնացածը՝ հիվանդություններով և վնասատուներով վարակված ու փչացածները վռնչացնել — այրել:

30. Աշնանը ծառերի վրայի յեղած վերքերը մաքրել մինչև առողջ փայտանյութը, վերքերն ախտահանել $10\frac{0}{10}$ -յա յերկաթ արջասպի լուծույթով:

31. Աշնանը տերևաթափից հետո հավաքել ծառերի վրայի մնացած վնասատուների բները, կտրել հիվանդ և վնասված ճյուղերը, պտուղներն այգուց դուրս բերել և այրել:

32. Աշնանը կամ գարնանը չորացած ծառերը հանել և տեղը տնկել նույն սորտի տնկիներ:

33. Այգիները ջրել ըստ պահանջի, կորիներով և մարգերով, յուրաքանչյուր միջնաբլուռ տալով 4-ից վոչ պակաս կորիներ:

4. ԲՈՒԺՈՒՄՆԵՐ

34. Գարնանը բողբոջների արթնանալուն պես (ուռչելուն պես) մինչև բացվելը ծառերը սրսկել $1\frac{0}{10}$ -յա բորբոյան հեղուկի, փարիզյան կանաչի (1 դուլլին 8

դրամ) կամ անաբազին սուլֆատի (մեկ դոլլին 12 գր.) լուծույթով: Յուրաքանչյուր բերքատու ծառի համար գործադրել 3 լիտր, վոչ բերքատու ծառին՝ 1,5 լիտր:

35. Բոլոր տեսակի պտղատու ծառերը լրիվ ծաղկաթափից հետո սրսկել $0,75^0$ յա բորդոյան հեղուկի, փարիզյան կանաչի (1 դոլլին 10 գրամ) կամ անաբազին սուլֆատի (1 դոլլին 12 գրամ) լուծույթով:

36. Յերկրորդ միացյալ բուժումից 15—20 որ հետո կատարել 3-րդ բուժումը 1^0 յա բորդոյան հեղուկի, փարիզյան կանաչի (դոլլին 12 գրամ) կամ անաբազին սուլֆատի (դոլլին 12 գրամ) խառնուրդով: Բերքատու ծառի սրսկման համար գործադրել 4 լիտր, իսկ վոչ բերքատու ծառի սրսկման համար գործադրել 2 լիտր հեղուկ:

37. Լվիճների ուժեղ տարածման դեպքում կատարել առանձին սրսկում անաբազին սուլֆատի և սապոնի լուծույթով, մեկ դոլլի ջրին վերցնել 12 գրամ անաբազին սուլֆատ և 50 գրամ սապոն:

38. Ցեցերի ուժեղ տարածման դեպքում կատարել լրացուցիչ բուժում այդ ֆլասատուների դեմ, գործադրելով կոնտակտ թույնների խառնուրդներ մեկ դոլլի ջրին վերցնել 12 գրամ փարիզյան կանաչ, 12 գրամ նիկոտին սուլֆատ, 24 գրամ կիր:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— ա) Տերևները բացվելուց հետո, մինչև վեգետացիայի վերջը դեղձենու ծառերի սրսկման ժամանակ չի թույլատրվում բորդոյան հեղուկին խառնել փարիզյան կանաչ և նիկոտին սուլֆատ ու անաբազին սուլֆատ.

բ) շերամի կերակրման շրջանում թթաստանա-

խառն պաղատու ծառերի բուժումը դադարեցնել,
մինչև շերամի տերևի ոգտագործման վերջը:

5. ՊՏՂԱՏՈՒ ՏՆԿԱՐԱՆԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

39. Պաղատու տնկարանի կազմակերպման համար ընտրել և հատկացնել սննդանյութերով հարուստ, հումուս պարունակող կամ ավազակավային, մոլախոտերից ազատ, լիովին ջրով ապահոված հողեր, վորոնք լինեն հարթ, կամ թեթև հարավային թեքությամբ առանց խորդուբորդությունների, դերժ ստորերկրյա ջրերից, յենթահողն ունենա ջրաթափանցիկություն հնարավորության պայմաններում տնկարանի համար հատկացնել աֆալիսի հողեր, վորոնք 2—3 տարի զբաղված են յեղիլ խոտաբույսերով: Տնկարանների հողամասերը պետք և պաշտպանված լինեն քամիներից և անասունների փչացումներից:

40. Տնկարանի համար հատկացված հողամասը, աշնանից, առնվազը ցանքսից 1,5 միս առաջ, մաքրել քարերից, թփերից, պարարտացնել գոմաղբով յուրաքանչյուր հեկտարին տալով 50—60 տոննա փտած գոմաղբ, վարել 20—25 սմ. խորությամբ և ցանքսի ժամանակ կատարել կրկնավար, հավաքել մնացած մոլախոտերի արմատները:

41. Հնդավորների ցանքսի համար վաղ աշնանը պատրաստել մարգեր մեկ մետր լայնությամբ, հիաշված թմբերը և 5—10 մետր յերկարությամբ ցանքսը կատարել շարքերով, պահպանելով նրա ջրելու հնարավորությունը:

42. Կորիզավորների ցանքսի համար պատրաստել ակոսներ 60—80 մետր յերկարությամբ և 70—80 սմ. ակոսների լայնությամբ:

2. ԿՈՐԻԶԱՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ՀՆԴԱՎՈՐՆԵՐԻ ՑԱՆԳՍԸ

43. Կորիզավորների և հնդավորների ցանքսը կատարել անպայման աշտնից. ցանքսի ժամկետ սահմանել լեռնային և նախալեռնային գոտիներում հոկտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը, իսկ դաշտային գոտում, հոկտեմբերի 1-ից՝ նոյեմբերի 15-ը: Հնդավորների ցանքսը կատարել սերմնարանում, իսկ դաշտային գոտում, յեթե նույն տարին հասունանում ե պատվաստի ցանքսը, թույլատրել կատարելու կորիներով:

44. Մարգերում հնդավորների ցանքսը կատարելու դեպքում սերմերը ցանիլ շարքերով, անպայման մարգերի մեջ լայնքին ուղղությամբ քաշած ակոսներում:

45. Սերմի խորությունը՝ խնձորի և տանձի համար վերցնել 2—3 սմ., իսկ մարգերում շարքերի հեղավորությունը իրարից 15 սմ.

Առանձին ակոսներում (վոչ մարգերում) ցանելու դեպքում հեռավորությունները շարքը-շարքից վերցնել 70—80 սմ., իսկ սերմը ցանել խիտ շարքերով, հետագայում նոսրացում կատարել:

46. Մեկ հեկտար տարածությունում ցանել 40—50 կգ. հնդավոր սերմ, իսկ ակոսներում ցանելու դեպքում 15—20 կգ. ծլունակությամբ 80⁰/օ-ից վոչ պակաս. մաքրությամբ 90—95⁰/օ-ից վոչ պակաս: Ցանքսը ավարտելուց անմիջապես սերմերը ծածկել ձեռքի փոց[սով, հակառակ յերեսի կողմով:

47. Կորիզավորները ցանել ափոսներով, յուրաքանչյուր ափոսի հեռավորութիւնը իրարից վերցնել 70—80 սմ.

Կորիզները ցանել 5—10 սմ. հեռավորութեամբ և 3—5 սմ. խորութեամբ: Մեկ հեկտար տարածութիւնում ցանել.

1. Դեղձենու կորիզ	400—500 կգ.	90 ⁰ / ₀	Ժլունակութեամբ
2. Ծիրանի »	200—250 »	95	»
3. Սալորի »	200 »	75	»
4. Բալ-կեռաս »	120 »	75	»
5. Նուշի »	200 »	80	»
6. Ընկույզ »	400 »	—	—

48. Հնդկավորների և կորիզավորների ցանքսից առաջ հողը ջրել, քեշը գալուց հետո կատարել վերջին վար ու ցանել: Ահնանը յերաշտի դեպքում ցանքսը ջրել 1—2 անգամ:

3. ՍԵՐՄՆԱՐԱՆԻ ՅԵՎ ԿՈՐԻԶԱՎՈՐՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԴԱՇՏԻ ՑԱՆՔՍԻ ԽՆԱՄՔԸ

49. Սերմնարանի և կորիզավորների ցանքսերը վեգետացիոն շրջանում 4—5 անգամ քաղհանել և փրկեցնել—զերծ պահելով մոլախոտերից:

50. Ջրել ըստ կարիքի, առանց ջրի հերթի, ջրել առատ և հաճախ: Յուրաքանչյուր ջուր տալուց հետո, քեշը գալուն պես, կատարել հողի փխրեցում:

51. Հնդկավորները սերմնարանում ծլելուց, 2—3 իսկական տերեւները դուրս գալուց հետո, կատարել նոսրացում, թողնելով բույսերը 2—3 սանտիմետրի վրա միմյանցից: Առաջին նոսրացումից 15 օր հետո կատարել 2-րդ նոսրացումը, սերմնաբույսերը միմյանցից թողնելով 5 սմ. վրա:

52. Կորիզավոր ցանքսի դաշտում նույնպես կատարել նոսրացում 2—3 անգամ քաղհանի ժամանակ. բույսերի վերջնական հեռավորությունը թողնելով իրարից 20—30 սմ.:

4. ՀՆԴԱՎՈՐՆԵՐԻ ՎԱՐՅԱԿՆԵՐԻ ՀԱՆՆԷԼԸ

53. Հնդավորների վարյակները աշնան սերմնաբանում տերևաթափից հետո հանել. յեթե վորեւս պատճառով հնարավոր չէ աշնանը հանելու, այդ դեպքում աշխատանքները կատարել վաղ գարնանը: Սերմնաբույսերը հանելուց հետո տեսակավորել ըստ արմատների վերերկրյա մասերի՝ անեցողության և նրանց տեսակավորել 3 կատեգորիայի՝ շատ լավ, լավ, միջակ և բրակ:

Յեթե վարյակները աշնանը չի տնկվելու և պահվելու յե գարնանը տնկելու համար, այդ դեպքում վարյակներն աշնանից անպայման պետք է թաղել փոքրիկ խրճերով ակոսներում թեք դրությամբ քեշ հողում, ցրտահարությունից ապահով վայրում այն հաշվով, վոր արմատները բաց չմնան:

5. ՎԱՐՅԱԿՆԵՐԻ ՏՆԿՈՒՄԸ ՏՆԿԱՐԱՆԻ Ի ԴԱՇՏՈՒՄ

54. Լավ արմատային սխտեմ ունեցող և առողջ տունկերի արմատների ծայրերը կտրել սուր դանակով կամ մկրատով, թողնելով 12—14 սմ. յերկարությամբ: Վարյակները տնկել ըստ նախորդ պատրաստված հողում ըստ տեսակավորման տեսակների, շարքը՝ շարքից 70—80 սմ. հեռավորությամբ, իսկ բույսը բույսից 35—30 սմ. հեռավորությամբ:

55. Վարյակները տնկել մինչև նրա արմատա-

վղիկը, իսկ աշնան տնկելու դեպքում մի քիչ խոր տընկել, վոտքով հողը նստացնելով արմատներին:

56. Վարյակները տնկելուց հետո անպայման ջրել:

6. ՎԱՐՅԱԿՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

57. Վարյակների մշակման (քաղհան, փխրեցում, ջրել և այլն) աշխատանքներն աֆսպես պետք է տանել, վոր նրանք լրիվ հասունանան պատվաստի համար նույն տարում:

58. Տարվա ընթացքում 4—5 անգամ քաղհան և փխրեցում կատարել ու միշտ հեռակել, վորպեսզի մոլախոտերը չզարգանան:

59. Կազմակերպել պայքար նկատված ֆնասատուների և հիվանդությունների դեմ, ֆնասատուների պայքարի մասնագետների անմիջական ցուցմունքներով:

7. ԱԶՔԱՊԱՏՎԱՍՏ

60. Նախորդ տարվա աշնանը կամ նույն տարվա գարնանը տնկած հնդավորների վարյակները կամ թե աշնանից ցանած կորիզավորներից բուսած վարյակները տվյալ տարին անպայման կատարել աչքապատվաստ:

61. Աչքապատվաստ կատարել ամռան, յերբ պատվաստակալներն ունեն ուժեղ հյութաշարժություն ու կեղևը հեշտությամբ բաժանվում է բնափայտից. պատվաստի համար սահմանել ժամկետ: Դաշտային գոտու աշխատանքները սկսել ոգոստոսի 10-ից և վերջացնել սեպտեմբերի 15-ին, իսկ լեռնային և նախալեռնային



գոտիների համար սկսել ոգոստոսի 5-ից և ավարտել մինչև սեպտեմբերի 1-ը:

62. Վարյակի կեղևը հեշտ բաժանելու համար, անհրաժեշտ է պատվաստելուց 4—6 որ առաջ պատվաստակալների հողամասը առատորեն ջրել:

63. Պատվաստ կատարելու նախորդակին, պատվաստակալների ցողունների ստորին մասում յեղած բոլոր ճյուղերը մինչև 15 սմ. բարձրության վրա կտրել և հեռացնել տնկարանից, պատվաստման աշխատանքներին չխանգարելու համար:

64. Պատվաստման համար կտրոններ միջերել պտղաբերող, ըստ սորտերի, հիվանդություններից և ֆուսաստոուններից զերծ ու առողջ ապրորացիայի յենթարկված ծառերից: Նվազ և թույլ աճած ծառերից կտրոնները չվերցնել: Ծառից կտրած կտրոնները անմիջապես դանակով կամ մկրատով հեռացնել, տերևները թողնելով 1 սմ. յերկարությամբ տերևակոթոններից: Կտրոնները նույն պահին փաթաթել խոնավ շորերի մեջ կամ թե պահել ջրի մեջ և ոգտագործել 2—3 որվա ընթացքում:

65. Պատվաստը դնել արմատավզիկից 3—5 սմ. բարձրության վրա, վարյակի հյուսիսային կողմից, վորպեսզի աչքը արևի տաքությունից քիչ տուժի (լեռնային գոտում պատվաստը դնել հարավարևմտյան կողմում):

66. Աչքապատվաստ կատարելուց 6—10 որ հողամասը չջրել: 15—20 որ հետո աչքապատվաստները ստուգել, թուլացնել կապերը, այն վարյակները, վորոնց աչքապատվաստը չի կպել, անմիջապես կատարել յերկրորդ պատվաստում, այս անգամ կրկնապատ-

վաստի տեղը ընտրել մյուս կողմից և առաջինից հընարավորության սահմաններում ցածր:

67. Աշնան սեզոնում լեռնային և նախալեռնային վայրերում աչքապատվաստներին բուկ տալ, իսկ հաջորդ գարնանը բացել պատվաստների բուկերը զգուշությամբ, վորպեսզի աչքերը չպոկվեն:

8. ՏՆԿԱՐԱՆԻ Զ-ՐԴ ՏԱՐՎԱ ԽՆԱՄՔԸ

68. Վաղ գարնանը նախքան բողբոջների աճելը, աչքապատվաստված վարյակների վերին մասը կտրել պատվաստից 1 սմ. բարձրությամբ:

69. Տնկարանում չկապած պատվաստակալները վերապատվաստել վաղ գարնանը հյութաշարժության ժամանակ, աչքապատվաստի կամ կտրոնապատվաստի միջոցով: Այդ նպատակի համար կտրոնները պատրաստել փետրվար ամսին, պահելով նրանց խոնավ ավազի մեջ:

70. Ամառվա ընթացքում վարյակի բնի վրա յերևացող ավելորդ աչքերը 2—3 անգամ մաքրել, պահպանել աչքապատվաստի ուժեղ աճումը:

71. Պատվաստի բնի վրա, մինչև սաղարթի հիմնական ճյուղերը, ամառվա ընթացքում յերևացող բոլոր մանր ճյուղերը 2—3 անգամ ծերատումներ կատարել՝ ցողունի հաստացման համար:

72. Վեգետացիոն շրջանում կատարել 4—5 անգամ քաղհան և փխրեցում, ջուրը տալ ըստ բույսի պահանջի և առանց հերթի:

73. Վնասատուների և հիվանդությունների յերևալուն պես կազմակերպել պայքարը:

9. ՏՆԿԻՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՏՆԿԱՐԱՆՈՒՄ

74. Հնդավոր լրիվ զարգացած տնկիների ձևավորումը կատարել վաղ գարնանը պատվաստելուց 2-րդ տարին, իսկ կորիզավորները պատվաստել 1-ին տարվա ամռանը: Ձևավորումը կատարել հմուտ, փորձված և այգեգործության հետ ծանոթ մարդկանց միջոցով:

75. Ձևավորումը հիմնականում կատարել փոփոխված լիզերային սիստեմով, կամ «Գոշեյի» 5 ճյուղանի սաղարթյան 1-ի հարկով: Լիզերային սիստեմով ձևավորման դեպքում՝

ա) ծիրանենու բնի բարձրությունը՝ թողնել 70—80 սմ., իսկ հիմնական ճյուղերի քանակը 8—6 հատ:

բ) խնձորենու և տանձենու բնի բարձրությունը վերցնել 70—80 սմ., իսկ հիմնական ճյուղերի քանակը՝ 6—8 հատ:

գ) սալորենու բարձրությունը թողնել 60—70 սմ., իսկ հիմնական ճյուղերի քանակը՝ 5—6 հատ:

դ) բնական սաղարթ տալ կեռասին և բալին: Կեռասի բնի բարձրությունը թողնել 60—70 սմ., բալենու բնի բարձրությունը՝ 40—50 սմ.:

յե) դեղձենուն տալ բաժակաձև սաղարթ, բնի բարձրությունը թողնելով 50—60 սմ., իսկ հիմնական ճյուղերի քանակը՝ 4—5 հատ:

76. Լիզերային սիստեմով ձևավորված տնկիները հիմնական այգում տնկելուց հետո ձևավորումը շարունակել:

10. ՏՆԿԻՆԵՐԻ ՀԱՆՆԼԸ

77. Տնկիներն աշնան տնկման համար հողից հանել աշնանը, իսկ գարնան տնկման համար հանել գարնանը:

78. Տնկենիները հանել խնամքով, աշնանը տե-
րևաթափից հետո, իսկ գարնանը՝ մինչև բողբոջների
արթնանալը, ուշադրություն դարձնել, վորպեսզի ար-
մատներին ու բնին վերքերը չառաջանան: Վորպես-
զի տնկիները շուտ հասունանան, հանելուց 20—25 որ
առաջ դադարեցնել ջրելը և վերջի ջուրը տալ հանե-
լուց 2—3 որ առաջ:

79. Տնկարանից բաց թողնվող տնկանյութը պետք
է բավարարի հետևյալ պահանջներին՝

ա) 20—30 սմ.-ից վոչ պակաս. յերկարության
փնջավոր արմատներ.

բ) լավ զարգացած ուժեղ ցողուն, վերքերը առող-
ջացած.

գ) սաղարթը կանոնավոր ձևավորված լինի.

դ) ճշտորեն համապատասխանեն սորտին.

յե) զերծ լինեն մեխանիկական ֆնսավածքներից.

զ) լինեն բավականին հասունացած և փայտացած:

6. ԶՈՐ ՄԵՐՁԱՐԵՎԱԴԱՐՁԱՅԻՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. ՏՆԿԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

80. Տնկարանի հողի ընտրությունն ու նախա-
պատրաստումը (դեկավարվել պտղատու տնկարանի
համար նշված համապատասխան կանոններով):

2. ՍԵՐՄԻ ՑԱՆՔՍ ՅԵՎ ԿՏՐՈՆՆԵՐԻ ՏՆԿՈՒՄԸ

81. Նշենու, ընկույզի սերմերը ցանել ակոսներով
աշնանից, իսկ գարնանը ցանելու դեպքում յենթար-

կել ստրատիֆիկցիայի կամ թրջման՝ ագրոպերսոնալի անմիջական ղեկավարությամբ:

Ցանքսը կատարել շարքերով 20—30 սմ. հեռավորության վրա 3—4 սմ. խորությամբ և շարքը՝ շարքից 70—80 սմ. հեռավորությամբ: Յուրաքանչյուր հեկտարին ցանել նշենու կորիզներ՝ 200 կգ., իսկ ընկույզենու՝ 400 կիլոգրամ:

82. Ցանքսից հետո անմիջապես ծածկել սերմերը հողով և առատորեն ջրել:

3. ԿՏՐՈՆՆԵՐԻ ՏՆԿՈՒՄԸ

83. Թզենու և նռնենու կտրոնները տնկել անպայման պարնանը, մինչև բողբոջների բացվելը: Թզենու և նռնենու կտրոնները կտրել մաքուր ամսուս և մինչև տնկելը պահել խոնավ ավազոտ հողում:

84. Կտրոնները կտրել 30—40 սմ. յերկարությամբ: Նռնենիների կտրոնների տրամագիծը պետք և լինի 1—1,5 սմ., իսկ թզենիների՝ 1,5—2 սմ.:

85. Կտրոնները տնկել ակոսներով, շարքերի հեռավորությունը միմյանցից վերցնել 60—70 սմ., իսկ կտրոն-կտրոնից 15—20 սմ.: Կտրոնները տնկելիս հիմքի ծայրերը թարմացնել ապա տնկել:

86. Կտրոնները տնկելիս նախորոք պատրաստած ակոսները լավ ջրել, ապա ջրի յեզրից 25—30 սմ. խորությամբ տնկել կտրոնները, այն հաշվով, վոր հողի յերեսին մնա 1—2 աչք:

87. Կտրոնները տնկելուց տնկարանը սկզբնական շրջանում ջրել հաճախակի՝ 5—6 օրը մեկ անգամ, հետագայում արմատակալելուց հետո ջրել ըստ պահանջի:

88. Ամռան ընթացքում տնկարանը քաղհանել և փխրեցնել 4—5 անգամ:

89. Նշենիները նույն տարվա ամռանը պատվաստել ստուգված լավագույն սորտերով:

4. ՏՆԿԱՐԱՆԻ 2-ՐԴ ՏԱՐՎԱ ԽՆԱՄՔԸ

90. Տնկարանի 2-րդ տարվա խնամքը, նույն ինչ վոր 1-ին տարին, այն է՝ ժամանակին ջրել, քաղհանել, փխրեցնել և այլն:

91. Պատվաստած նշենիները վաղ գարնանը բողբոջներ լի բացման ժամանակ պատվաստած աչքից 1 սմ. բարձրությամբ սուր դանակով կամ մկրատով կտրել և բնի վրայի ավելորդ աչքերը մաքրել:

92. Իբրև տնկանյութ ոգտագործել թզենու և նռենու արմատակալած յերկամյակները, նշենու միամյակները և ընկուզենու յերկամյակները կամ յեռամյակները:

5. ՆՈՐ ԱՅԳՈՒ ՏՆԿԵԼԸ ՅԵՎ ԽՆԱՄՔԸ

93. Նորատունկ այգու հողամասի ընտրությունը նախապատրաստական աշխատանքները, ինչպես և տնկման ձևերն ու մշակությունը նույնն է, ինչ վոր տրված է պտղատու այգու տնկման համար (տես պլանդատու նորատունկ այգու մասին):

94. Տնկումները կատարելիս շարքը-շարքից և բույսը-բույսից վերցնել՝

Դաշտային գոտի

Նախալեռնային գոտի

ա) Թզենիների բնանի . 7×7 մետր

բ) Թզենիներ թփային . 4×4 »

գ) Նռենիներ » . 4×4 »

—
 3×3 մետր

3×3 »

դ) Նշենիններ 5×5 »
յե) Ընկուզենիններ . . . 20×20 »

20×20 մեար

95. Ընկուզենինները տնկել բացառապես ձորերում, առուների ափերին, ճանապարհների կողքերին և այլ վայրերում:

96. Տնկիների հիմնական ձևավորումը կատարել այդուժ տնկելու 1-ի տարին:

Թզենինները և նռենինները կարելի յե թե միաբուն ծառի ձև տալ և թե թփային ձև տալ:

ա) Թզենինները միաբուն ձև տալու համար, 1-ին տարին դարնանը թողնել մեկ հիմնական շիվ, իսկ մյուսներն ամբողջովին հեռացնել: 2-րդ տարին ետել 40—50 սմ. բարձրության վրա:

բ) Թզենիններին թփային ձև տալու համար, դարնանը տունկերը 3—4 աչքից վեր ետել հողային նոր շվեր առաջացնելու համար:

գ) Նռենիններին թփային ձև տալու համար, տընկման 1-ին և 2-րդ տարին միայն ճյուղերի թեթև ծերատում կատարել, իսկ 3-րդ տարին թողնել 3—5 աչք առողջ և ուժեղ աճած շվեր բնի շուրջը համաչափ դասավորված, իսկ մնացած ավելորդ շվերը հեռացնել:

Միաբուն ծառ ստանալու համար թողնել ամենաառողջ և ուժեղ զարգացած շվեր, իսկ մյուսները հեռացնել:

97. Նշենինների ձևավորումը կատարել զեղձենիների նման բաժակաձև:

98. Ընկուզենինների ձևավորում անհրաժեշտ չե, յեթե սաղարթի վրա միմյանց խանգարող ճյուղեր կան, անհրաժեշտ ե հեռացնել և կանոնավորել սաղարթը:

1. ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Շրջանում խաղողի այգիներ ունեցող կոլեկտիվ տնտեսությունները, կոլտնտեսականները, մենատնտեսները և հիմնարկները պարտավոր են իրենց այգիները մշակել լրիվ և բարձր վորակով, կիրառելով հետևյալ ագրոձեռնարկումները.

1. ԲԵՐՔԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐ

1. Խաղողի այգիների ետը կատարել հմուտ մարդկանց միջոցով վաղ փարնանից, այն հաշվով, վոր նա ավարտվի մինչև բողբոջների բացումը:

Ետը կատարելիս առաջնորդվել հետևյալ հիմնական սկզբունքներով.

ա) ուժեղ վազերը ետել յերկար՝ 10—12 աչքի վրա, ավելացնելով բերքատու մատների քանակը, այն հաշվով, վոր վազը ապահովի լրիվ բերքատվությունը և նորմալ աճեցողությունը.

բ) թույլ վազերը ետել կարճ՝ 7—9 աչքի վրա, ձգտելով համապատասխան բերքատվության հետ միասին ապահովել վազի հետագա զարգացումը.

գ) ետելիս հաշվի առնել սորտի առանձնահատկությունները:

2. Ետ կատարել հետևյալ ժամկետներում: Դադատային գոտում՝ փետրվարի 15-ից մինչև մարտի 10-ը, նախալիռնային գոտում՝ մարտի 1-ից մինչև մարտի 20-ը:

3. Ետելիս մաքրել վազի վրայի ամեն տեսակի չորուկները, հեռացնել հիվանդ և թույլ մատները—բռնից գուրս յեկած հեռացած մատները, թողնելով միայն

այնպիսիք, վորոնք անհրաժեշտ են հետազայում վազի վերակառուցման համար:

4. Պարտադիր կարգով այգիների բաց տեղերը լրացում կատարել անդալիզի միջոցով, վորի համար ետի ժամանակ թողնել համապատասխան մատեր և փորելու ժամանակ կատարել անգալիզը:

5. Արգելվում և 3 տարեկանից բարձր նորատունկ այգիները թողնել առանց նեցուկների: Գարնանից կարգի բերել հին այգիների նեցուկները (բխերը), փոխել փչացածները և ուղղել ու բարձրացնել ընկածներն ու թեքվածները և բոլոր վազերը կապել նեցուկներին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Տնկանքի համար կտրոնները պատրաստելու նպատակով, վազերը ետել նախորդ: Տնկելու համար պիտանի կտրոնները ջոկել, խրձեր կապել 200-ական, վրան ամրացնել սորտի անունը, խրամատներում հողով ծածկել:

6. Այգիները փորել ետին զուգահեռ, համատարած կերպով, թե խմբերի վրա և թե թմբերի մեջ: Թմբերը փորել 25 սմ. խորությամբ, իսկ թմբերի մեջ, 18—20 սմ.: Այգեփորի ժամանակ վոջնչացնել մակերեսային արմատները (մորուս) հավաքել չափերը, շիզի արմատները (դանդուրդան), շիպատուկի արմատները հանել այգուց դուրս և այրել: Փորման աշխատանքները սկսել վաղ գարնանից և ավարտել վոջ ուշ մինչև բողբոջների բացվելը:

7. Վազերը կռացնել ծաղկելուց 10—15 օր առաջ, կռացնելու ժամանակ հեռացնել հին վազի (սեխ) վրայի ավելորդ և խանգարող շվերը:

8. Այգիները 4 տարին մեկ անգամ հերթակա- նորեն պարարտացնել գոմաղբով, գոմաղբ ցրել այգում փորելուց առաջ, իսկ մինչ այդ տեղափոխված գոմաղ-

բը պահել մեծ կույտերով, յերեսը հողի բարակ շերտով ծածկած:

9. Կատարել կանաչ հատումներ (սուդ տալ) յերկու անգամ, 1-ին սուդը վերջացնել մինչև ծածկելը՝ կռացման ժամանակ, 2-րդ սուդը տալ ծաղկումից հետո 15-ից մինչև 30-ը հունիսի: 2-րդ սուդը կատարել այգու մկրատով կամ սուր դանակով:

10. Այգիները մոլախոտից մաքուր պահելու համար կատարել քաղհան, 1-ին անգամ՝ 15—25-ը հունիսի, 2-րդ անգամ՝ 1—15-ը սեպտեմբերի:

11. Սիստեմատիկ կերպով հետևել այգիներին, գայլուկը (ճողովակ) յերևալուն պես անմիջապես ձեռքով հավաքել դուրս բերել այգուց ու այրել:

12. Այգիները ջրի հետեյալ ժամկետներում՝

ա) 1-ին ջուրը տալ փորելուց 4—5 որ առաջ.

բ) 2-րդ » » ծաղկաթափից հետո, իսկ յեթե դա-
րունը յերաշտ ե, ծաղկից 15 որ առաջ:

գ) 3-րդ ջուրը տալ պտղալիցքի ժամանակ (դուռ):

դ) 4-րդ » » բերքահավաքից 20 որ առաջ:

յե) 5-րդ » » տերեւաթափից հետո:

զ) 6-րդ » » ձմեռվա սեզոնին ըստ կարիքի:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Քարքարոտ, ավաղոտ և ջրասակավ՝ վայրերում այգիները ջրել ըստ պահանջի հերթի, խուսափելով ծաղկման շրջանում և բերքահավաքի շրջանում ջրելուց:

13. Պատիվ արգելվում է՝

ա) այգեփորից հետո 15—20 որից շուտ ջրել այգիները.

բ) ծաղկման շրջանում ջրել այգիները.

գ) բերքահավաքից 15—20 որից շուտ ջրել այգիները.

դ) այգիներում անասուններն արածացնելը:

14. Բերքահավաքը կատարել առանց կորուստների դանակներով: Սահմանել բերքահավաքի ժամ-

կետներ: Դաշտային գոտում սկսել հոկտեմբերի 1-ից և վերջացնել հոկտեմբերի 15-ը, նախալեռնային գոտում սկսել հոկտեմբերի 10-ից և վերջացնել հոկտեմբերի 20-ը, յեթե իրոք այդ ժամանակ խաղողը լրիվ հասել է:

15. Բերքահավաքից 10 որ առաջ ապահովել փոխադրական միջոցները, պատրաստել քթոցներ, կարգավորել մառաններն ու չորանոցները: Քաղված բերքը տեսակավորել:

16. Աշնանը, խաղողի վաղի տերևները իբրև կերոգտագործելու համար թուլյատրել բերքահավաքից 15—20 որ հետո, նոյեմբերից վոչ շուտ, հողբաժնի թուլյատվությամբ:

Խաղողի սելեկցիայի համար սահմանել յերեք տարի դիտողություն, բերք չտվող վաղերը փոխարինել լավ բերքատու սորտերով:

2. ԽԱՂՈՂԻ ՏՆԿԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

17. Տնկարանների համար ընտրել թեթև և պատրաստ հողամասեր. ընտրած հողամասն աշնանը գութանով խոր վարել, գարնանը կատարել կրկնավար, հետո տնկել կտրոնները:

18. Կտրոնները պատրաստել գարնանը ետի ժամանակ, նախորոք ճանաչված: Կտրոնները պետք է լինեն 50 սանտիմետրից վոչ պակաս յերկարությամբ: Կտրոնները կապել խուրճերով ըստ փոփոխականների 200-ական հատից, գրել սորտի անունը և թաղել խըրամատներում:

19. Նախքան տնկելը, տնկարանի հողամասը հար-

թել, մաքրել քարերից, չափերից, շիգի արմատներից (դանդուրդան):

20. Կտրոնները թաղած տեղից հանելուց հետո մինչև տնկելը հիմքի կողմից թարմացնել և դնել հոսող ջրի մեջ մինչև 3 օր:

Կտրոնները տնկել 30—40 սմ. խորությամբ, շաքար-շաքարից 70—80 սմ., կտրոն-կտրոնից՝ 10 սմ. հեռավորությամբ: Հողից վերև թողնել 2 աչքից վոչ ավել, վորոնցից մեկ աչքը, ներքևինը, պետք է լինի հողի մակերեսին կպած:

21. Կտրոնների տնկելը ավարտել մինչև ապրիլի 10-ը, տնկելուց անմիջապես ջրել և մինչև արմատավալելը ջրել հաճախակի 5—6 օրը մեկ անգամ, հետագայում արմատավալելուց հետո ըստ կարիքի:

22. Վեգետացիայի ընթացքում 4—5 անգամ կատարել քաղհան և փխրեցում:

23. Միլիդիու հիվանդության դեմ պայքարելու համար կատարել 2—3 անգամ բորբոյան հեղուկի 1⁰/₀-ային լուծույթի բուծում: Անհրաժեշտության դեպքում ոեղիում հիվանդության դեմ փոշոտում կատարել ծծումբով 1—2 անգամ:

3. ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄԸ

24. Խաղողի միլիդիու հիվանդության դեմ պայքարելու նպատակով կատարել 1⁰/₀-ային բորբոյան հեղուկի սրսկում տարեկան 2—3 անգամ. 1-ին անգամ՝ մինչև ծաղկելը՝ 1—20-ը մայիսի, 2-րդ սրսկումը ծաղկաթափից հետո, դուայի շրջանում հուլիսի 10—30-ը, 3-րդ սրսկումն ըստ կարիքի:

25. Խաղողի ուղիումի դեմ փոշոտել ծծումբով 2

անգամ. 1-ին անգամ՝ ծաղկման մոմենտին, 2-րդ փու-
շտումը կատարել 1-ին փուշտումից 15—20 որ հետո:

26. Խաղողի վողկույզակերով վարակված ալգի-
ներում (Ջանիձոր, Ալիզարա) պայքար կազմակերպել
հողբաժնի ֆնասատունների դեմ պայքարող մասնագետի
անմիջական մասնակցությամբ:

27. Վաղ գարնանը վազերի բների վրայի մեռած
կեղևները մաքրել, խնամքով հավաքել այգուց դուրս
բերել և այրել:

28. Ուշ աշնանը կամ վաղ գարնանը խաղողի
թափած տերևները հավաքել և այրել:

29. Գայլուկով վարակված խաղողի վազերը
նկատվելուն պես, ձեռքով մաքուր մաքրել, դուրս բե-
րել այգուց և վոչնչացնել:

ԴԱՇՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԲԱՆՋԱՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Շրջանում կոլեկտիվ տնտեսությունները, կոլտըն-
տեսությունները, մենատնտեսները, հիմնարկ-ձեռնարկ-
ները պարտավոր են զաշտավարական և բանջարանո-
ցային կուլտուրաները մշակել՝ անշեղորեն կիրառելով
հետևյալ ագրոտեխնիկական միջոցառումները:

ԴԱՇՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Յեղնելով Մեղրու շրջանի գյուղատնտեսության
բնագավառում պետության կողմից տրված առաջա-
դրանքից, աշխարհագրական, հողային, կլիմայական
պայմաններից, մշակվող կուլտուրաներից ու մոտավո-
րապես միանման ագրոձեռնարկումների կիրառման

հնարավորութիւններէց, գյուղերը և հողերը խմբավորել հետևյալ կերպ՝

№	Գաղաթափին գոտու մեջ գտնուել	Նախախնային գոտու մեջ գտնուել	Լեռնային գոտու մեջ գտնուել
1	Մեղրու գյուղի հողամասերը, բացի Լիշիվաղից:	1. Մեղրու Լիշիվաղի հողամասերը:	1. Լիճք, Տաշտան, Կալեր վանք, Թաղամեղ, Մուլք, Արեւիկ, Արիկեղ, Վ. Մալա, Եռնաձոր գյուղերի ամբողջ հողերը:
2	Կարճեղանի գյուղից ներքին հողամասերը:	2. Կարճեղանի գյուղից վերև հողամասերը (Ղալնի, Չամի):	2. Ալիգարայի, Շվանի՝ ձորի, Թ. Դուլի, Նվաղի ամառանոցները և ձառքի հողամասերը:
3	Լեհվաղի հողամասերը բացի ամառանոցից:	3. Գուգեմեխի, Ագարակի, Կուրիսի, Վարհակի բոլոր հողերը, բացի ամբողջից:	3. Թեյ և Բուղաքարի սարի և գյուղի շրջակա հողերը:
4	Ն. Մալիկի հողամասերը	4. Ն. Վարդանիձորը և Ն. Չամի հողերը:	4. Ագարակի, Կուրիսի, Գուգեմեխի, Չվաղհավաղի սարի հողերը:
5	Ալիգարայի արանի հողամասերը:	5. Փուշկաղի ամբողջ հողերը:	
6	Շվանիձորի հողամասերը:	6. Թեյի գետափի հողերը:	
7	Թ. Դուլի		
8	Նվաղի		

Տվյալ հողամասերում կուլտուրաների զարգացման ուղղութիւնն տալ՝

Պտղաբուծութիւն, մերձարեւադարձային կուլտուրաների, շերամապահութիւն հացահատիկ, անասնապահութիւն:

Տվյալ գյուղախումբերում կուլտուրաների զարգացման ուղղութիւնն տալ՝

Շերամապահութիւն, պտղաբուծութիւն, հացահատիկ, անասնապահութիւն:

Տվյալ գյուղախումբերում և հողամասերում կուլտուրաների զարգացման ուղղութիւնն տալ՝

Դաշտավարութիւն, անասնապահութիւն զարգացումը:

ՀԱՅԱՍՏԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՆԵՐԻ ՍԵՐՄԱՑՈՒՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՑՈՒՄ ՅԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ

1. Ապպրոքացիոն արձանագրութիւնների համաձայն, ըստ նշված տեսակների ու կատեգորիաների, միանգամայն առանձին հնձել, դիզել ու կալսել սերմադաշտերի ու սերմացույի համար պիտանի ճանաչված հողամասերի ցանքսերը:

2. Հենց կալում, ամենաուշը մինչև բերքի բաշխման սկիզբը, առնվաղն ընթացիկ տարվա պլանի չափով, թե՛ աշնանացան և թե՛ գարնանացան սերմացուն զտել, մաքրել ու առանձնացնել, նորմալ չորութեան վիճակում, պահել սերմացուների համար հատկացված առանձին մաքուր, ախտահանված ու ապահով պահեստներում:

3. 1939 թ. աշնանացանը լավորակ սերմերով ապահովելու, ցանքսը ոգոստոսի կեսերից սկսելու նպատակով, Դաշտունի, Կալերի և Վանքի կոլխոզներում 1938 թ. աշնանացանի բերքից առանձնացնել սերմացու ընդհանուր պահեստի $1/4$ չափով:

4. Հացահատիկային բոլոր պահեստներն ինվենտարն ու տարան բերքահավաքից մեկ ամիս առաջ ախտահանել (պահանջի դեպքում յերկու անգամ կատարել ախտահանում), համաձայն հողբաժնի հրահանգի և ֆնասատուների դեմ պայքարող մասնագետի անմիջապես դեկլարությամբ:

5. Սերմացուն թույլ տալ լցնելու իր հատուկ պահեստը կամ շտեմարանը, ֆնասատուների դեմ պայքարող մասնագետի, կոլտնտեսության նախագահի և վորակի ստուգման տեսչի մասնակցությամբ կազմված սերմապահեստի կամ շտեմարանի յուր նպատակին ծառայեցնելու ու ամբարային ֆնասատուներից միանգամայն զերծ լինելը, հաստատող արձանագրությունից հետո միայն:

6. Բերքահավաքից 15 որ առաջ կատարել բոլոր պահեստների ու տարանների պասպորտիզացիան ու անհրաժեշտ վերանորոգումները: Յուրաքանչյուր տեսակ սերմացույին ըստ յուր սորտերի ու կատեգորիաների հատկացնել առանձին շտեմարան, արգելել իրարից դժվար անջատվող կուլտուրաների շտեմարաններն իրար կից դասավորումը:

7. Սերմացուն պահեստ կամ շտեմարան լցնել վոչ ավել, քան մեկ ու կես մետր բարձրությամբ, այն հաշվով, վոր պահպանման ընթացքում միշտ հնարավոր լինի սերմացույի ամբողջ պարտիայի դրությունն ստուգելու:

8. Բերքահավաքից մինչև ցանքսը, սերմացույի պահպանման ու կանոնավոր խնամքի ամբողջ պատասխանատվությունը դնել անձամբ կոլտնտեսության նախագահի վրա, պարտավորեցնելով նրան պարբերա-

բար, առնվազն 10—15 որը մեկ անգամ կցված մասնագետի մասնակցութեամբ ստուգելու սերմացուի առկա դրութիւնը և ֆնասատունների հայտնաբերման դեպքում միջոցներ ձեռք առնել այդպիսիներին իսպառ վոչնչացնելու համար: Յուրաքանչյուր ստուգման համար կազմել հատուկ արձանագրութիւն:

2. ՍԵՐՄԱՑՈՒԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

9. Ցանքսի համար ընտրել լավագույն սերմեր, մաքրել դրանց ամեն տեսակի աղբից, պահպանել հափըշտակումից ու փչացումից, պահել դրանք մաքուր ոդափոխվող շենքերում, ընդարձակել տեսակավոր սերմերի ցանքը (Որինակելի կանոնադրութեան 4-րդ գլխ. «բ» կետը):

10. Խստիվ արգելել ցանելու այն սերմացունքը, վորոնք սերմ ստուգող լաբորատորիայի կողմից տվյալ սերմացուի լավորակութիւնը հաստատող համապատասխան փաստաթուղթ չունեն:

11. Կոլտնտեսութիւնների ամբողջ ցանքի սերմացուն պարտադիր կարգով յենթարկել լաբորատոր ստուգման, ավարտել վոչ ուշ, հոկտեմբերի 15-ը, աշնանացանի նկատմամբ վոչ ուշ, քան ցանքսից 5 որ առաջ, իսկ 2-րդը՝ գարնանացանից 20 որ առաջ, ըստ գոտիների, ստուգումները կատարելով առանձին որիենտիր հետեյալ ժամկետներում՝

Դաշտային գոտու համար՝ 15/II, նախալեռնային՝ 1/III, լեռնային՝ 15/III և 10/IV:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Առաջին և վերջին ստուգման միջանկյալ ժամանակաշրջանում կատարել լաբորատոր ստուգումներ, այնքան անգամ, մինչև վոր տվյալ սերմացուի պարտիան լրիվ չափով համապատասխանի սահմանված կոնդիցիային:

12. Ցանքսը կատարել, ղեկավարվելով 3/1 1938 թվի № 1 կանոնադրությունով, միաժամանակ պայքարելով 100% մաքրության համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Առաջին դասին պատկանում են այն զարնանացան ցորենի ու գարու վորակի սերմացուն, վորոնց մաքրությունը հավասար է 99%-ի: Խառնուրդը հավասար է 1%-ի, վորից մեռած աղբը 0,2%-ի, այլ կուլտուրային բույսերի սերմերի քանակը վոչ ավել, քան 5 հատ մեկ կիլոգրամում և մոլախոտերի քանակը վոչ ավել, քան 5 հ. մեկ կիլոգրամում: Ծլունակությունը վոչ պակաս, քան 95%:

Յերկրորդ դասին պատկանում են 97%-ի մաքրությամբ և 3%-ից վոչ ավել խառնուրդ ունեցողները, վորից մեռած աղբը վոչ ավել 0,5%, այլ կուլտուրաների սերմերը մեկ կիլոգրամում վոչ ավել, քան 150 հատ, մրիկի պարկեր մեկ կիլոգրամում վոչ ավել, քան 10 հ., ծլունակությունը վոչ պակաս, քան 90%:

13. Կոնդիցիայից բարձր աղբոտած սերմացուն քամհար սերմազտիչից և տրիերից բաղկացած ագրեգատով զտել և ստուգել այնքան անգամ, մինչև վոր սերմացուն համապատասխանի հիշված կոնդիցիային:

14. Լաբորատոր ստուգման համար սերմացուն նմուշները վերցնել, համաձայն հրահանգի խմբակային ագրոնոմի կամ սերմ ստուգող լաբորատորիայի մասնագետի և կամ նրա կողմից գրավոր լիազորված անձի միջոցով միայն:

15. Ամբողջ հացահատիկի սերմացուն յենթարկել ախտահանման, ըստ վորում սերմադաշտերինը կատարել բացառապես թաց կամ կիսաչոր մեթոդով (նայած հացահատիկի տեսակի), իսկ մնացած ցանքերը ըստ հնարավորին նույնպես առաջին հերթին թաց կամ չոր յեղանակով. սակայն ղեղանյութերի և այլ տեխ-

նիկական միջոցների բացակայության կամ կլիմայական աննպաստ պայմանների դեպքում, հողբաժնի հատուկ թույլտվությամբ ու ցուցմունքներով, ախտահանումը կատարել չոր յեղանակով: Յուրաքանչյուր ախտահանված պարտիայի համար կազմել արձանագրություն:

3. ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ ՅԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ

16. Ցանքաշրջանառությունը կիրառված կոլտընտեսություններում 1938 թ. գարնանը վերանայել, մտցնել անհրաժեշտ ուղղումներ (Լիճք, Դաշտուն, Կալեր, Արևիկ) և ցանքը կատարել բացառապես ցանքաշրջանառության տախտակում նախատեսված կարգով և քանակով:

17. Ցանքաշրջանառությունը չկիրառված կոլտնտեսություններում միջոցներ ձեռք առնել կատարվող ցանքը մասսիվացնելու համար և պաշտպանել կոլտտերանների հաջորդականությունը, բերքի առավելագույն չափով բարձրացման տեսանկյան տակ:

4. ԴԱՇՏԵՐԻ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ

18. Ամբողջ գոմաղբը, խառնաղբը, մոխիրը, գիշերային վոսկին ոգտագործել իբրև պարարտանյութ:

19. Բոլոր խոշոր գոմերին կից կառուցել հատուկ աղբամբարներ, գոմաղբը և խառնաղբը ոգտագործել իբրև պարարտանյութ. աղբամբարներում 3—4 ամիս 2 մետր բարձրությունից, վոչ ավել շերտով պահելուց հետո:

20. Ուշ աշնանը և ձմեռվա ընթացքում դաշտը տեղափոխված աղբը պահել խոշոր կույտերով (հեկտարին տրվող նորման 3—4 կույտից վոչ ավելին), ամրացնել և վերևից տանիքաձև ծածկել հողային շերտով:

21. Հասունացած աղբը հողի յերեսին փռել հավասար, անմիջապես խոր վարել թե՛ գարնանը և թե՛ աշնանը: Մոխիրը պահել չոր վայրում և մտցնել հողի մեջ գարնանից փոցխի տակ:

22. Հողերի մասսիվացման կարգով միջնակների և այլ խամ հողերի վարելաշերտն ոգտագործել իբրև պարարտանյութ:

23. Վոռոգման ցանցից հանած տիղմը առուների յեզրերին չպահել, այլ ոգտագործել իբրև պարարտանյութ, ցրելով շրջակա հողամասերում:

24. Լավ պահպանված և խնամված գոմաղբով պարարտացնելիս սահմանել հետևյալ միջին դոզաները՝

ա) ծանր ավազային և կավ ավազային հողերում, հեկտարին տալ 40—50 տոննա:

բ) թեթև շագանակագույն և համեմատաբար ուժեղ հողերում հեկտարին տալ 30 տոննա:

5. ՑԱՆՔԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

25. Վարից առաջ հողամասը մաքրել քարերից, ավելորդ թմբերը հարթել, միջնակները վերացնել:

26. Վարը, իբրև որենք, կատարել հողի քեշի հասունացած ժամանակ միայն:

Գուլթանի վարի հետևից ակոս առ ակոս հավա-

քել շիգի, չայիրի, փաթաթուկի և այլ մոլախոտերի արմատները և այլն:

27. Վարը կատարել մաքուր, առանց խամի ու խարակի, հարթ տարածություններում նախորդ վարին ուղղահայած. հակառակ պարագային գործը դնելիս անպայման յեղնել տվյալ դաշտի նախորդ վարի ուղղությունից՝ առը ներսի դեպքում, գործը դնել առը դուրս և ընդհակառակը:

28. Վարի ամբողջ ընթացքում, բրիգադի կամ նրա կողմից իր պատասխանատվությամբ լիազորված անձի հսկողությունը անփոփոխելի է, վորի վորակի ամբողջ պատասխանատվությունը դնել բրիգադի և կոլտնտ. վարչության նախագահի վրա՝ վարելահողերի նախապատրաստումն աշնանացանի համար:

29. Աշնանացանն ամբողջությամբ, իբրև կանոն, կատարել ցելի վրա, բացառությամբ թույլ տալ միայն հողբաժնի կարգադրությամբ վորոնք հող չեն ունեցել ցել ցել կատարելու համար. միաժամանակ մեկից յերկու ուղղելով այդ դրությունը:

30. 1939 թ. աշնանացանի համար նախատեսված մաքուր ցելային հողամասերում ըստ պլանի կատարել ցել, այն հաշվով, վոր ցանքերից ազատ հողամասերը ցելի տակ գնան 100% -ով. ըստ վորում վաղ ցելը կատարել զարնանացանի զուգընթաց և ավարտել դաշտային գործն ապրիլի մեկին, նախալեռնային դոտում՝ ապրիլի 20-ին և լեռնային դոտում՝ մայիսի 1-ին:

Բոլոր առաջին վարերի խորությունը սահմանել առնվազն 20 սմ, բարձրությամբ այն հողերի, վորոնց վարելաշերտերն այդ խորությունը չունեն:

31. Սև ցելը փոցխել գարնան դաշտ դուրս գա-

լու առաջին հնարավոր մոմենտին, իսկ վաղ ցեղերը փոցխել ցեղը կատարելուց անմիջապես հետո:

32. Զբաղեցրած ցեղը վարել զբաղեցրած կուլտուրայի բերքահավաքից անմիջապես հետո, կատարելով նաև նրա փոցխումը:

33. Սև և գարնան վաղ ցեղը մինչև ցանքի սկիզբը մշակել առնվազն 3 անգամ, այն հաշվով, վոր ցանքի ժամանակ ցեղադաշտերը միանգամայն ազատ լինեն մոլախոտերից և փափուկ վիճակում լինեն: Ցեղերի կրկնավարը կատարել 10—12 սմ. խորությամբ, իսկ մոլախոտերով վարակված և ջրով ապահովված դաշտերում, խորությունը սահմանել առնվազն 14 սանտիմետր:

6. ՎԱՐԵԼԱՅՈՂԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ՀԱՄԱՐ

34. Գարնանացանն, իբրև կանոն, կատարել ցըրտահերկի վրա շարքահերկ բույսերից հետո, գարնանը վարած խոպան հողերում և համապատասխան նախորդվող ապահովված համատարած ցանքսերից հետո:

35. Յրտահերկը և գարնան առաջին վարը կատարել առնվազն 20 սմ. խորությամբ, բացառությամբ այն հողամասերի, վորոնք այդ հաստությամբ վարելաշերտ չունեն:

36. Յրտահերկի ավարտման վերջնական ժամկետը սահմանել դաշտային և նախալեռնային գոտում՝ նոյեմբերի 15-ը, լեռնային գոտում՝ նոյեմբերի 1-ը: Համատարած ցանքսերի դեպքում ամառը նախորդող բույսի բերքահավաքին, մասնավորապես խոնավու-

Թյուրնով ապահովված հողերում, կատարել խոզանավար
վոչ ավել, քան 10—12 սմ. խորուլթյան, նայած վարա-
կող մոլախոտերի տեսակներին, իսկ աշնանը՝ նույն
այդ դաշտերին առնվազն 20 սմ. ցրտահերկել:

37. Գարնանը հողի քեշին անմիջապես ցրտա-
հերկը կրկնավարել, ըստ վորում թեթեւ, փուխը մնա-
ցած և մոլախոտերով չվարակված դաշտերում ցըր-
տահերկի գարնան մշակումը թուլատրել կատարելու
նաև փոցխերով, իսկ ծանր կավային ու առհասարակ
նստած, պղնձացած ու մանավանդ մոլախոտերով վա-
րակված հողամասերում գարնանը կատարել ցրտա-
հերկերի կրկնավար առնվազն 14 սմ. խորուլթյամբ ու
առանձին դեպքերում ագրոնոմի ցուցմունքներով կա-
տարել խոր վար:

38. Կրկնավարից, կամ յերկրորդ վարից անմի-
ջապես հետո փոցխել, բոլոր դաշտերը մաքրել քարե-
րից, քոլերից, և ապա կատարել ցանքը:

39. Կոշտոտ հերկերում փոցխումը կատարել առ-
նըվազն 2 յերես, իսկ կրկնավարի դեպքում կամ փըխ-
րուն հողերում՝ մեկ յերես, վարի հակառակ ուղղու-
թյամբ:

40. Մոլախոտերով խիստ վարակված դաշտերում,
ըստ հնարավորին, գարնան ցանքը կատարել սահ-
մանված ժամկետի վերջում, մոլախոտերը ուշ վարի
միջոցով վոչնչացնելու նպատակով:

7. ՍԵՐՄԱԲՈՒԾՈՒՅՑՈՒՆ

41. Բոլոր կոլտնտեսություններում լավորակ հո-
ղամասերից սերմաբուծության նպատակով առանձ-
նացնել հատուկ սերմադաշտեր հետևյալ քանակով՝ աշ-

նանացան ցորենի ցանքի տարածությունը 12⁰/₀-ի չափով, գարու և հաճարի 13⁰/₀-ի չափով, գարնանացան ցորենի 15⁰/₀-ի չափով, յեզիպտացորենի 3⁰/₀-ի չափով:

42. Սերմադաշտերից ստացած բերքը միանգամայն առանձնացնել և ոգտագործել առաջին հերթին տվյալ կոլտնտեսության միմիայն սերմացույի կարիքներին համար:

43. Սերմադաշտին անհրաժեշտ սերմացուն առանձնացնել սելեկցիոն սորտերից և տեղական ալլատեսակների մասսայական հասկային ընտրություններից ստացված հատիկներից (լեռնային գոտում ֆերրիզիններում կարմրահատ, նախալեռային գոտում երիւրուսպերմում — սպիտակահատ, գարի գրդաշ): Ստացած բերքի պահպանումը կատարել, համաձայն ապարդաքի տնտեսական անհրաժեշտության առանձին-առանձին:

44. Ցանքաշրջանառություն կիրառող կոլտնտեսություններում սերմադաշտն առանձնացնել միմիայն ցանքաշրջանառության համապատասխան դաշտերում, յեղնելով ռատացիայից, իսկ մնացած կոլտնտեսություններում համապատասխան լավ նախորդող ապահոված լավորակ, մոլախոտերից զերծ հողամասերում: Թե մեկ և թե մյուս դեպքում գարնան հացահատիկների սերմադաշտերն առնվազն 20 սմ. խորությամբ ցրտահերկել, գարնանը կրկնավարել, փոցխել և նոր ցանել. իսկ աշնանացան հացահատիկներին հատկացնել միմիայն լավ մշակված սև, ալդախին չլինելու դեպքում, վաղ ցելի հողամասերից:

45. Սերմադաշտերի պարարտացումը կատարել միայն փոսած կամ համապատասխան խնամքով պահված

գումաղբով: Սերմադաշտերը թարմ գումաղբով պարարտացումն արգելել:

46. Սերմադաշտերի անկյուններում տնկել ցուցանակներ, նշել հացահատիկի սորտը և տարածությունն. իսկ հողբաժնում նշված հացահատիկի ձևով կազմել մատյան և շրջանում ամբողջ սերմնադաշտերն, ըստ կուլտուրաների ու սորտերի ցուցակագրման յենթարկել:

47. Սերմնադաշտերի սորտային քաղհանը համարել պարտադիր:

48. Մասսայական ընտրությամբ սերմի քանակը տվյալ կուլտեսուության՝ գալիք տարվա սերմնադաշտերի համար պահանջվող սերմացույի քանակից պահված չպետք է լինի:

8. Յ Ա Ն Ք

49. Արգելվում է խոզանի յերեսին գութանի կամ արորի ցանք կատարելը:

Սերմը ցանել նախապես խորը, վարած ու լավ փոցխած հողամասի վրա, ապա գործարանային կամ տեղում պատրաստած կուլտիվատորներով ծածկել սերմը, այն հաշվով, վոր սերմն ընկնի 4—7 սմ. խորությամբ, նայած հողային պայմաններին: Ուշ աշնանացանը և ավազային հողամասերում համեմատաբար սերմը զցել խոր, իսկ խոնավությամբ ապահովված հողամասերում ընդհակառակը:

50. Գարնան մասսայական ցանքսը սկսել հողի քեշին, առանց սպասելու ամբողջ դաշտի քեշը դա-

լուն, այլ առանձին հողակտորներում քեշը գալուց ըս-
կըսել ցանքը:

51. Յուրաքանչյուր գոտում ցանքը ավարտե-
ցորենի, գարու, հաճարի նկատմամբ 6—9 բանվորա-
կան որում, իսկ ցրտահերկերում՝ 4—5 բանվորական
որում:

52. Գարնանացան հացահատիկների ավարտման
որիենտիր վերջնական ժամկետ սահմանել՝ դաշտային
գոտում՝ մարտի 15-ին, նախալեռնային գոտում՝ ապ-
րիլի 5-ին, լեռնային գոտում՝ մայիսի 1-ին:

53. Աշնանացան հացահատիկային կուլտուրանե-
րի ցանքների սկիզբը՝ լեռնային գոտում սահմանել
ոգոստոսի 20-ը, նախալեռնային գոտում սկիզբը սեպ-
տեմբերի 1-ը, դաշտային գոտում սկիզբը սեպտեմբե-
րի 15-ը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— ա) յուրաքանչյուր գոտում աշնանա-
ցանի ավարտման ժամկետը սահմանել 8—9 բանվորական որ.

բ) աշնանացանների ժամկետները սահմանելիս հաշվի առ-
նել սորտերի առանձնահատկությունները, ըստ վորում աշ-
նանացան ռասաները ցանել շուտ, իսկ գարնանացան ռասա-
ները, վորոնք զանվում են աշնանից, համեմատաբար ուշ:

54. Աշնանացանի ամբողջ ցանքը կատարել ցե-
լերի վրա, բացառությամբ թույլ տալ այն գյուղերի
նկատմամբ, վորոնք հող չեն ունեցել ցելիլու համար և
վորոնց մասին կա հողբաժնի հատուկ թույլտվու-
թյունը:

55. Ըստ գոտիների ցանքի խորության նորման
սահմանել՝

Կուլտուրաների անունը	Դաշտային գոտու ցանքի մասը	Նախակու- նային գոտ- այի ցանքի հա- մար	Լեռնային գոտու ցանքի համար
Աշնան ցորեն	1,2	1,3	1,5
» գարի	1,3	1,4	1,6
Գարնան ցորեն	1,0	1,1	1,2
» գարի և հաճար	1,1	1,2	1,3
Կորեկ	0,12	0,12	0,12
Յեզիպտացորեն	0,6	0,6	0,6

Ցանքի ժամանակ յուրաքանչյուր գյուղում յուրաքանչյուր հողամասի նկատմամբ ունենալ ուրույն մոտեցում, ցանքի խորության նորման հարմարեցնելով տեղի հողային պայմաններին, ձևակերպելով այն արտադրական խորհրդակցություններում:

56. Պարտավորեցնել պահեստապետներին և հաշվապահներին, հատուկ մշակված ձևով խիստ հաշվառման յենթարկել ըստ բրիգադների և սառնանների յուրաքանչյուր որվա բաց թողնված սերմերի քանակը և փաստորին ցանվածը:

57. Վրոռգվող հողերում ջրելու համար անհրաժեշտ և կորիններ քաշելը պատրաստել ցանքին զուգընթաց:

58. Բոլոր ջրովի հողամասերում, յեթե հողը քեշին չէ, ջրել հետո կատարել ցանքը:

Յերաշտ տարիներին անհրաժեշտ դեպքում, աշնանից աշնանացան ցանքերը ջրել մեկ անգամ:

9. ՑԱՆՔԻ ԽՆԱՍՔԸ

Համաձայն տրված պլանի վաղ զարնանից քեշին փոցխել, լավ թփակալած աշնան ցանքերը կավային և կավաավազային հարթ հողերում փոցխումը ավարտել մինչև բույսի 10 սմ. բարձրության հասնելը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ավազային խիստ նոսր ցանքերում փոցխում չկատարել:

59. Հացահատիկային ցանքերը քաղհանել առնել վազն յերկու անգամ այն հաշվով, վոր հիշված մոմենտին ամբողջ ցանքերն ազատ լինեն մոլախոտերից: Քաղհանած մոլախոտերը դաշտից դուրս բերել, այրել կամ ոգտագործել իբրև անասնակեր: Հողը քաղհանել մոլախոտ յերևալուն պես, քաղհանավորներին տրամադրել ձեռնոցներ և գործիք:

60. Ցանքերի շուրջը միջնալններում, թմբերում բուսած խոտը քաղել մինչև նրանց ծաղկակալումը:

61. Չվոռոգվող հողամասերում աշնանացանի և զարնանացանի սնուցանումը (աղբը ցրելը) կատարել նրանց փոցխելուց առաջ, իսկ վոռոգվող հողամասերում բացի փոցխի հետ տված սնուցանումը, առաջին և յերկրորդ սնուցման ժամանակ, տալ սնման պարարտանյութ համաձայն ամեն մի հողամասի համար վորոշված քանակի:

62. Վաղ կատարված ու թփակալված աշնան ցանքերը, աշնանից առնվազն մեկ անգամ քաղհանել:

63. Ցանքերն արածացնելը, թե՛ աշնանը և թե՛ զարնանը խիստ արգելել:

64. Հացահատիկային ցանքերի վոռոգումը կատարել առնվազն 3 անգամ (յեղնելով ջրային, հողային և կլիմայական պայմաններից), առաջին ջուրը

տալ բույսի թփակալման շրջանում, յերկրորդը՝ հասկա-
կալման, 3-րդը՝ հատիկակալման շրջանում:

65. Կրծողների դեմ համատարած պայքար սկսել
ձյունը դաշտից վերանալուն պես, այն հաշվով, վոր
մինչև դաշտում կանաչի յերևալը բոլոր վարակված
հողամասերում պայքարն ավարտված լինի: Այնպե-
ս, պայքարն սկսել դաշտերում կանաչը վերանալուն պես,
այն հաշվով, վոր մինչև ձյուն դալը գործն ավարտ-
ված լինի:

66. Բոլոր ցանքերի նկատմամբ սահմանել մըշ-
տական հսկողություն և ֆլասներ կամ հիվանդություն-
ներ հայտնաբերելու դեպքում անմիջապես հայտնել
հովրաժնին և միաժամանակ համաձայն ֆլասատուներ-
ի դեմ պայքարող մասնագետի ցուցումներով սկսել
պայքարը, այս նպատակի համար նշանակել հատուկ
սիզնալիզատորներ:

10. ՀԱՅԱՔՈՒՅՍԵՐԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ

67. Կոլտնտեսության ամբողջ ցանքերի նկատ-
մամբ ապահովել դաշտային հսկողությունը, նշանակել
հատուկ պահակներ, մասնավորապես բերքահավաքի
ամբողջ ընթացքում:

68. Բերքահավաքի անհրաժեշտ ամբողջ ինվեն-
տարի ձեռք բերումն ու վերանորոգումն ավարտել վոչ
ուշ, քան բերքահավաքի սկզբից 30 օր առաջ: Նույն
ժամկետին ավարտել բոլոր միջգյուղյա և դաշտամիջյա
ճանապարհների ու կամուրջների վերանորոգումն ու
կարգավորումը:

69. Բերքահավաքն սկսել ըստ առանձին հողա-

մասերի հասունացման, առանց սպասելով ամբողջ դաշտի հասունացմանը:

70. Հացահատիկային հնձի համար վերջնական ժամկետ սահմանել աշնանացանի նկատմամբ նրա հասունացման մոմենտից 8—10 որվա ընթացքում: Գարնանացան ցանքերի և գարու նկատմամբ՝ նրա հասունացման մոմենտից 6—8 որվա ընթացքում:

71. Սերմադաշտերի հունձը կատարել տվյալ ցանքի լրիվ հասունացման շրջանում:

72. Ամբողջ հնձված հացահատիկը խուրձ կապել և դիզել կամ անհրաժեշտության դեպքում բերթակ դնել: Դաշտերի դիզելու աշխատանքներն ավարտել վոչ ուշ, քան ամբողջ հնձի աշխատանքներն ավարտումից 10 որ հետո:

73. Բարդոց դնելիս խուրձերը դասավորել դեպի ներս և դասավորել մի գծի ուղղությամբ, այն հաշվով, վոր հնարավոր լինի բարդոցների շարքերի մեջ բերքահավաքին զուգընթաց կատարել խողանավար:

74. Հնձից հետո և խրձերը կրելուց հետո ամբողջ դաշտում կաղմակերպել հասկահավաք:

75. Դաշտում բարդոց կամ խուրձ յեղած ժամանակաշրջանում արգելել անասունների արածացնումը կամ տվյալ դաշտում աշխատանքը վերջացնելուց հետո ավելորդ անձանց ներկայութիւնը:

76. Սահմանել իբրև որենք, վոր դաշտավարական բրիգադի բրիգադավարները պարտավոր են ամեն տր հատուկ արձանագրությամբ ընդունել դաշտում կատարված բերքահավաքը, գնահատելով կատարված աշխատանքի վորակը: Դաշտի բերքահավաքը ավարտած համարել միմիայն այն ժամանակ, յերբ դաշտը բրի-

գաղափարից ընդունել և կոլտնտովարչության նախագահը:

77. Պարտադիր կարգով դեղերի մոտ ջրով լիք տակառներ և ջրամբարներ ունենալ, դեղերի շուրջը վարել և նրանց մոտ ունենալ ավազակույտեր: Կողմնակի մարդկանց մուտքը կալում և դեղերի մոտ արգելել: Վոչ մի պայմանով թույլ չտալ ծխել. ունենալ մշտական պահակներ, զանգ, սուլիչ և այլն:

78. Կալսուճն սկսել հնձին գուգընթաց, բայց վոչ ուշ, քան հնձի սկզբից 3 ուր հետո. կալումը կատարել անպայման ըստ առանձին բրիգադների:

79. Բերքահավաքի համար անհրաժեշտ գյուղատնտեսական ամբողջ ինվենտարը, նախ քան բերքահավաքի սկսելը, ախտահանել: Արգելել հացահատիկը կալսել հին կալերում առանց նախապես այդպիսիք կիզելու, ախտահանելու:

80. Թաց քոլաշը նախորոք չորացնել և նոր միայն թույլ տալ դիզելու կամ կալսելու:

81. Կալսման գուգընթաց գործի դնել սերմազտիչներ, տրիեբնների աշխատանքն այն հաշվով, վոր առաջին հերթին ապահովի ընթացիկ տարվա աշնանացան սերմացվի անխախտ կանոնավոր սերմազտումը և ապա գալիք գարնանացանի սերմացվի լրիվ զտումն այն հաշվով, վոր մինչև բերքահավաքի բաշխումը տնտեսության ամբողջ պահանջվող սերմացուն զտված կոնդեցիոն լինի:

82. Կամերով կալած թեղն արգելել մեկ ուրից ավել առանց քամելու թողնել կալում:

83. Կալից դուրս յեկած և վոչ մի հացահատիկ

առանց կշռելու և համապատասխան նաըյադ կազմելու, պահեստում ամբարելն արգելվում է:

84. Հացահատիկն ամբարել նորմալ խոնավություն ունենալու դեպքում, միայն. 12—13⁰/₀-ից ավելի խոնավություն ունենալու դեպքում հացահատիկը չորացնել՝ հասցնելով նորմալ չորության ապա նոր ամբարել:

2. ԿԵՐԱԲՈՒՅՍԵՐ (ԽՈՏՀԱՐՔՆԵՐ), ԱՐՈՏՆԵՐ

ԱՌՎՈՒՅՏԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Առվույտի ցանքի համար հատկացված հողամասերն աշնանից վարել 20—22 սմ. խորությամբ, հավաքելով մոլախոտերի արմատները: Վաղ գարնանը կատարել կրկնավար 14—16 սմ. խորությամբ:

2. Վարից առաջ աշնանը կամ գարնանը տալ 20—30 տոննա գոմաղբ մեկ հեկտարին, հավասար փռել հողի յերեսին և վարել:

3. Ցանքը կատարել վաղ գարնանը—գաշտ գուրս գալու առաջին իսկ հնարավոր մոմենտին, որիենտիր ժամկետ սահմանելով գաշտային գոտու համար սկիզբը փետրվարի 25-ից, վերջը մարտի 10-ը. նախալեռնային գոտում մարտի 1-ից—15-ը:

Լեռնային գոտում սահմանել ցանքի ժամկետներ ըստ գաշտերի և սառնանների (տրված ընդհանուր ժամկետների սահմանը) մարտի 15-ից մինչև ապրիլի 5-ը յուրաքանչյուր գոտում: Ցանքը թույլատրել կատարել թե՛ ծածկոցի տակ և թե՛ առանց ծածկոցի, նայած հողային պայմաններին: Սերմնարուծական նպատակով առվույտի ցանքը կատարել լայնաշարք

50—60 սմ. միջնաբային տարածությամբ և առանց ծածկոցի՝ մաքուր պարարտ հողում:

4. Ծանր հողերում առվույտի ցանքը կատարել գցելով սերմը 1—3 սմ. խորությամբ:

5. Յեթե հողը բավարար խոնավություն չունի, լավ ջրել հետո լավ քեշին կատարել ցանքը, այն հաշվով, վոր խոնավությունը բավարար լինի սերմը ծլելու համար մաքուր ցանքերում, ցանքից հետո առաջին ջուրը տալ ըստ կարիքի, յերբ յերևան են գալիս 3—4 տերևներ, իսկ յենթացանք լինելու դեպքում ջրելը հարմարեցնել ծածկող բույսին մինչև հացահատիկի բերքահավաքը: Հացահատիկի բերքահավաքից հետո անմիջապես ջրել՝ առվույտի ցանքսը, իսկ հետագայում ջրել ըստ պահանջի և ջրի քանակի: Տեղիք չտալով չորացման և լճացման դեպքերի: Առվույտի ցանքերը պետք է լավ ջրել և կտրել ջուրը, թույլ չտալ յերկար ժամանակ որերով կամ ամբողջ գիշերով ջուրը թողնել ցանքսի վրա:

6. Շաղացան առվույտի համար մեկ հեկտարում ցանել 18—20 կգ. սերմ, նայած հողային պայմաններին: Նախ քան ցանելը սերմերը վարակել նիտրագինով:

7. Լայնաշարք սերմնացունների ցանքերի միջնաբային տարածությունները քաղհանել 3—4 անգամ:

8. Հին առվույտի ցանքերը վաղ գարնանից փոցխել յերկու անգամ զիգ-զազ փոցխով և հավաքել քրերը: Պարարտանյութ տալ փոցխելուց առաջ:

9. Առվույտը հնձել ծաղկման սկզբին: Չորանալուց հետո կապել և 5 որվա ընթացքում դաշտից տեղափոխել պահեստ: Առվույտը հնձել դաշտային գո-

տում 4—5 անգամ, նախալեռնային գոտում 3—4 անգամ և լեռնային գոտում 2—4 անգամ:

10. Սերմացու առվույտը հավաքել, յերբ պատիճների 75⁰/₀-ը գոլորշիացել ե, հունձը կատարել վաղ առավոտյան և տեղափոխել աֆսպես, վոր ճանապարհին չթափվեն: Կալում լավ չորացնելուց հետո անմիջապես կալսել և մաքրել սերմերը: Տարբեր սորտի սերմերը կալսել և պահել առանձին-առանձին:

11. Առվույտի թրթուրը յերևալիս առաջին քաղը պետք ե կատարել ժամկետից շուտ, վորպեսզի փաստառն չտարածվի: Դադցով (ճղողակ) վարակված դաշտը հավաքել, հեռացնել դաշտից և այրել: Ուժեղ վարակված դաշտերը վարել և մի քանի տարի առվույտ չցանել:

2. ԿՈՐՆԳԱՆԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

12. Կորնգանն առաջին տարին մուտք գործելով մեր շրջանն ամբողջ ստացված սերմացուն ոգտագործել սերմացունների համար, կատարելով լայնաշարք ցանքս, միջշարքային տարածությամբ 50—60 սմ.:

13. Ցանքսի համար հատկացրված հողամասերը խորը վարել՝ 20—22 սմ. խորությամբ և կրկնավարից հետո կատարել ցանքսը վաղ գարնանից: Լայնաշարք ցանքսերի համար սերմացվի նորմա ընդունել 30—40 կիլոգրամ մեկ հեկտարին: Իսկ հետագայում կերի համար ցանվելիք կորնգանի ցանքսի սերմի նորման սահմանել մեկ հեկտարին 1—1,1 ցենտներ. ցանքսը կատարել 2—4 սմ. խորությամբ, յեղնելով հողային պայմաններից:

14. Սերմնարաններում կատարել քաղհան 2—3 անգամ, շարքերը լավ կանաչելուց և յերևալուց հետո:

15. Թե կորնգանի և թե առվույտի դաշտերը մինչև բերքահավաքի վերջն արգելել անասուններ ա-
րածացնելը, իսկ առաջին տարվա ցանքսերի ծածկոցի
բերքահավաքից հետո ել արգելել անասուններն արա-
ծացնելը:

3. ՎԻԿԱՅԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

16. Վիկան չի կարելի ցանել ստորերկրյա ջրերի
մոտիկ և հարավային չոր լանջերում. նա պահանջում
է նորմալ խոնավություն և կավաավազային հող:

17. Վիկի համար հատկացված հողամասերն աշ-
նանից վարել 18—20 սմ. խորությամբ, աշնանացան
վիկան ցանել աշնանացան հացահատիկային ցանքսե-
րին զուգընթաց, իսկ դարնանացան վիկան ցանել դար-
նանացան հացահատիկային ցանքսերի զուգընթաց հո-
դի քեշ վիճակում:

18. Հեկտարին ցանել մեկ ցենտներ վիկի սերմ,
ցանքսը չպակասելու համար, վիկի հետ խառը ցանել
հեկտարին 0,5 ցենտներ դարի, վորդիսին հնձվելու յե
վիկի հետ միասին իբրև խոտ:

19. Կերի համար վիկա հնձել ծաղկման շրջանում.
հնձված վիկը լավ չորացնելուց հետո զգուշությամբ
տեղափոխել պահեստ:

20. Սերմացու վիկը հավաքել, յերբ պատիճները
50%-ով հասունացել են, հավաքել առավոտյան ցողին,
զգուշ տեղափոխել կալը, չորացնել և կալել: Սերմերը
նորմալ չորանալուց հետո տեղափոխել պահեստ:

4. ՍԻԼՈՍԱՅԻՆ ԲՈՒՅՍԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

21. Իբրև սիլոսային բույսեր ցանել յեգիպտացորենի և արևածաղկի հատուկ ցանքսեր:

22. Յեգիպտացորենի և արևածաղկի համար շատ խոնավ հողամասեր չհատկացնել:

Ցանքատեղերը աշնանից պարարտացնել 30—40 տոննա գոմաղբով և 20—22 սմ. խորությամբ վարել գարնանը, կրկնավարից հետո կատարել ցանքսը:

23. Յեգիպտացորենը և արևածաղիկը ցանել շաքերով 50—60 սմ. միջշարքային տարածությամբ, յեգիպտացորենի նորմա ընդունել մեկ հեկտարին 40—50 կիլոգրամ, արևածաղիկի՝ 30—40 կիլոգրամ:

24. Սիլոսային բույսերի ցանքսերը քաղհանել 2—3 անգամ և կատարել 2 անգամ նոսրացում աֆն հաշվով, վոր վերջում բույսերը լինեն շաքքում իրարից 15—20 սմ. հեռավորությամբ:

25. Սիլոսի համար արևածաղիկը քաղել լրիվ ծաղկման շրջանում, իսկ յեգիպտացորենը՝ կաթնային հասունացումից մինչև մոմային հասունության շրջանը:

5. ԿԵՐԻ ՃԱԿՆԴԵՂԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

26. Կերի ճակնդեղի համար հատկացրված հողամասն աշնանից վարել 20—22 սմ. խորությամբ, մինչև վարը պարարտացնելով 30—40 տոննա գոմաղբով, գարնանը կրկնավարից հետո կատարել ցանքսը:

27. Կերի ճակնդեղի ցանքսը կատարել վաղ գարնանացյան կուլտուրաների զուգընթաց, սերմացվի նորմա ընդունել 16-ից 20 կիլոգրամ մեկ հեկտարին:

28. Ճակնդեղի բույսի իսկական տերեւների ա-

ռաջին զույգը կազմակերպվելուց կատարել շարքերում նոսրացում, [թողնելով մեկական բույս 18—20 սմ. հեռավորությամբ, միաժամանակ ստուգել բաց մնացած տեղերը և լրացնել, ցանելով նախորոք թրջված սերմով:

29. Ամբողջ վեգետացիայի շրջանում ճակնդեղի ցանքսերը քաղհանել և փխրացնել 3—4 անգամ:

30. Ճակնդեղի բերքահավաքը կատարել, յերբ տերևները սկսում են չորանալ և շարքերը նորից բացվում են, բերքահավաքը կատարել չոր յեղանակին մինչև ցրտերն ընկնելը:

6. ԲՆԱԿԱՆ ԽՈՏՀԱՐՔՆԵՐ ՅԵՎ ԱՐՈՏՆԵՐ

31. Բոլոր խոտհարքներում վաղ գարնանից կազմակերպել քարերի հավաքման աշխատանքները, քարերը դուրս բերել դաշտից կամ խոր թաղել:

32. Վոռոգվող խոտհարքներում մինչև առաջին ջուրը ժաքել, կարգի բերել խոտհարքների բոլոր առուները, ճահճոտ վայրերում կատարել դրենաժ, չորացնելու և բարձր վորակով խոտ ստանալու նպատակով:

33. Խոտի բերքահավաքից մեկ ամիս առաջ վերանորոգել տնտեսության մեջ բերքահավաքի ինվենտարը և գնել պակսորդը:

34. Մինչև խոտհանձն ավարտումը և խոտի տեղափոխումն արգելել խոտհարքներում անասունների արածացնելը:

39. Խոտհարքների պարարտացնելը կատարել գարնանը փտած գոմաղբով, տալով հեկտարին 30—40

տոննա: Սոտհարքի յերեսին փռել ու փոցխել յերկու յերես:

36. Բոլոր խոտհարքներում կազմակերպել մոլախոտերի վերացման պայքարը, վերացնելով դաշտից թունավոր խոտերի բույսերը և վշավոր մոլախոտերը մինչև նրանց ծաղկելը:

37. Սոտհարքի խոտակազմի մեջ հացազգիների քանակը գերակշռելու դեպքում խոտհունձը կատարել մինչև ծաղկելը, խոտը չփթացնելու նպատակով՝ իսկ խոտակազմի մեջ լոբազգիների գերակշռման դեպքում խոտհունձը կատարել նրանց ծաղկման սկզբին:

38. Զրոյի խոտհարքները դաշտային գոտում հընձել յերկու անգամից վոչ պակաս, մյուս գոտիներում, վորոշ հանդերում, վորտեղ հնարավոր է հնձել յերկու անգամ, իսկ յեթե յերկրորդը չի հասնում, հնձել մեկ անգամ:

39. Անջրդի բոլոր խոտհարքները և արոտներից խոտհարքների համար թողած տարածությունները պաշտպանել մինչև նրանց հնձելը, նշանակելով հատուկ պահակներ:

40. Սոտը հնձել 2—4 սմ. բարձրությամբ, հընձված խոտը կապել զգուշությամբ, ծաղիկները և տերևները չջարդել: Սոտը կապել նորմալ չորության վիճակում ($16^0/0$ խոնավությամբ), այն հաշվով, վոր խրճի մեջը չբորբոսնի կամ վաղանած չլինի: Կապած խոտը 5 օրվա ընթացքում կրել պահեստը կամ խոշոր գեղերով դիզել, հմուտ մարդկանց միջոցով: Դեղերի շուրջն առուներ փորել իսկ գազաթին փռել վոչ պիտանի ծղնոտներ: Սոշոր գեղերն ապահովել հակահրդեհային միջոցներով և մշտական պահակներով:

41. Դարնանն արոտներում անասունների արա-

ծացնելը սկսել ձյունը հալչելուց և հողի նորմալ չորանալուց հետո:

42. Արոտներն արածացնել հերթականորեն այն հաշվով, վոր յերկրորդ անգամ արածացնելու ժամանակ վերականգնած լինի արոտի խոտաբույսերը:

Այդ նպատակով արոտները բաժանել առանձին արոտամասերի և նշել նրանց հատկացումն ըստ անասունների տեսակների, ըստ վորում ավելի հարթ արոտամասերը հատկացնել խոշոր յեղջյուրավոր անասուններին:

43. Պլանային կարգով ամեն տարի կազմակերպել արոտների քարերի հավաքելը (գարնանը և աշնանը այն ժամանակ, յերբ տնտեսությունն ունենում է ավելի շատ ազատ բանվորական ուժ): Միաժամանակ կազմակերպել արոտներում թունավոր խոտերի և փշոտ մոլախոտերի վոչնչացման դեմ պայքարը:

44. Ծահճացած արոտները բարելավել, չորացնելով դրենաժների միջոցով:

45. Վաղ գարնանից, յերբ արոտները բացվում են ձյունից, կազմակերպել աղբյուրների, ջրամբարների (գոլերի) մաքրման, կառուցման և վերանորոգման աշխատանքները, այն հաշվով, վոր արոտային շրջանում անասունները բավարարված լինեն մաքուր և բավարար քառակուսյամբ ջրով:

46. Արոտի շրջանի վերջում յաթաղներում կուտակված գոմաղբը ցրել շրջակա արոտում և ոգտագործել մոտակա ցանքսերի համար:

47. Խոտհարքների պիտանի արոտները առանձնացնել և թողնել խոտը հնձելու համար:

48. Կազմակերպել վայրի կորնգանի սերմի հա-

վաքելը, առանձնացնելով այդ նպատակի համար վորոշ հողակտորներ և հետագայում իբրև արոտ ցանել այդ սերմերը:

49. Արգելել արոտների և բնական խոտհարքների վաքելը (այդպիսին թույլ տալ միայն ցանովի խոտհարքների վերածելու դեպքում):

3. ԿԱՐՏՈՖԻԼ, ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՆԵՐ ՅԵՎ ԱՐԱԽԻՍ

1. ԿԱՐՏՈՖԻԼԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Կարտոֆիլի ցանքների համար առանձնացրելոված հողամասերը աշնանից վաքել վորչ պակաս 2 սմ. խորությամբ և առանց փոցխելու թողնել մինչև գարուն:

Գարնան կատարել կրկնավար, յերկրորդ հերկից հետո անմիջապես փոցխել:

2. Հեկտարին տալ 50—60 տոննա փտած գոմաղբ, աշնանից ցրտահերկի տակ կամ գարնանից կրկնավարի տակ: Մոխրաղբային պարարտանյութերը տալ գարնանից՝ հեկտարին 12—15 տոննա:

3. Կարտոֆիլի ցանքսի 14⁰/₀-ի չափով կատարել կարտոֆիլի սերմնացվի ցանք, ընտրված տեսակներից:

4. Իբրև կանոն արգելել կարտոֆիլի տեղը հաջորդ տարին նորից կարտոֆիլ ցանել: Կարտոֆիլի ցանքսը նույնպես կատարել առնվազն 2—3 տարուց հետո:

5. Ցանքսի նախորդակին կազմակերպել սերմացվի վերջին ընտրությունը ըստ գույնի և այլ հատկանիշերի: Ցանքսի համար ոպտագործել 8 զր. և ա-

վելի քաշ ունեցող առողջ կարտոֆիլի պալարները:

6. Կարտոֆիլի տարբեր գույն ունեցող պալարները ցանել առանձին հողամասերում:

7. Սերմացվի մեկ հեկտարի նորման ըստ գոտիների՝ որիենտիր ընդունել դաշտային գոտում 14—16 ց., նախալեռնային և լեռնային գոտիներում՝ 16—18 ց., յուրաքանչյուր առանձին ցանքսի համար ունենալ առանձին մոտեցում և տեղում մշակել ցանքսի նորմաներ:

8. Իբրև կանոն մեկ բնում տնկել մեկ պալար, ցանքսը կատարել ակոսներով (թմբերով), միջշարքային տարածությամբ 60—65 սմ., իսկ թփերը-թփերից 30—50 սմ. հեռավորությամբ:

9. Արգելել կիսած կամ կտրած պալարներով ցանքսը:

10. Պալարի տնկման խորությունը սահմանել թեթև հողերում 10—12 սմ., ծանր կավային հողերում՝ 8—10 սմ.:

11. Ցանքսը կատարել տվյալ գյուղի կոլտնտեսության հացահատիկային կուլտուրաների մասսայական ցանքսի ժամկետում: Դաշտերի զոնացման սկզբունքի համաձայն 5—7 բանվորական որում:

12. Կարտոֆիլի ցանքսը վեգետացիոն շրջանում փխրեցնել առնվազն 3 անգամ և բուկ տալ 2 անգամ. առաջին քաղհան-փխրեցումը կատարել շաբաթերը նըմարվելուն պես, յերկրորդը՝ առաջինից 8—10 որ հետո, յերրորդը մինչև առաջին բուկիցը, հետագայում քաղհան կատարել, յեթե մոլախոտեր կլինեն.

13. Կարտոֆիլի առաջին բուկը տալ բույսի 18—20 սմ. բարձրության ժամանակ, 2-րդ բուկը տալ մին-

չև թփի ծաղկելը, չորային պայմաններում բուսկլիցը փոխարինել սխտեմատիկ փխրեցման: Լեռնային և նախալեռնային գոտում կարտոֆիլի ջուրը տալ առաջին անգամ, առաջին բուսկլիցի նախորդակին, յերկրորդ և յերրորդ՝ թփի ծաղկման շրջանում, հետագայում՝ ըստ անհրաժեշտության, վերջին ջուրը տալ և վարել բերքահավաքից 25—30 ուր առաջ: Դաշտային գոտում ջուրը հարմարեցնել վերև հիշված ժամկետներին, բայց ջրել այնքան անգամ, վորքան անհրաժեշտ է բույսի աճեցողության համար:

14. Յուրաքանչյուր ջրից հետո քեշին փխրեցնել հողը ցափկաններով (հողուբազններով):

15. Սերմադաշտերի ցանքսերը առաջին և յերկրորդ ջրելու ժամանակ տալ մնուցանում գոմաղբով կամ խառն աղբով—հեկտարին 3—4 տոննա:

16. Կարտոֆիլի ամբողջ ցանքսը կատարել հունիս ամսվա ընթացքում՝ իսկ դաշտային գոտում՝ մայիս ամսում: Փիտոֆտորա հիվանդության դեմ իբրև նախազգուշական միջոց սրսկել բորդոյան հեղուկով, խոնավ և անձրևային յեղանակներին կատարել յերկրորդ սրսկումը:

17. Յանքսում նկատվող այլ հիվանդությամբ վարակված թփերը, ինչպես թփերի գանգրահերություն, տերևների կուչ գալը, բազմացողունությունը և այլն արմատախիլ անել և այրել:

18. Բերքահավաքի ժամանակ ինչպես և ցանքսի նախորդակին սերմացուի ընտրություն կատարել, ջուր, հեռացնել հիվանդ վարակված բոլոր տեսակի պալարները:

19. Կարտոֆիլի բերքահավաքը կատարել պալա-

րի լրիվ հասունացման ժամանակ 7—10 որում, արևոտ և չոր յեղանակներին:

20. Բերքը հավաքել և տեղափոխել պահեստ այնպես, վոր պալարները ջարդվածքներ չստանան:

21. Բերքահավաքից մեկ ամիս առաջ ավարտել կարտոֆիլի ամբարների, տարայի, փոխադրական միջոցների ստուգման, վերանորոգման և պահեստների ախտահանման աշխատանքները, այդ առթիվ յեղած հատուկ հրահանգի համաձայն:

22. Բերքահավաքի ժամանակ ընտրել և առանձնացնել լավորակ, ըստ սորտերի, կարտոֆիլի սերմացուն և ամբարել հատուկ հարմար ամբարներում կամ բուրտերում:

23. Ամբարներում, բուրտերում սերմացու կարտոֆիլի բարձրության շերտը 1—1,25 մետրից բարձր թույլ չտալ և պահել 2—3° ջերմության տակ (Ցեխիումում):

24. Չմռան պահպանման ժամանակամիջոցում կատարել սերմացվի 3—4 անգամ ստուգում, փչացման վտանգ նկատելիս անմիջապես միջոցներ ձեռք առնել և հայտնել հողբաժնին:

25. Կարտոֆիլի ծլիւրը դուրս գալու նախորդակին կարտոֆիլի ցանքսը փոցխել զիգ-զազ փոցխով:

26. Առանձին կերպով ձևավորել բերքահավաքի ժամանակ. դեմ պայքարի դործը:

ԱՐԱԽԻՍԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

27. Արախիսի համար առանձնացրված հողամասերի նախապատրաստման ազրոտեխնիկան նույնն է, ինչ նախատեսվում է կարտոֆիլի համար:

28. Արախիսի ցանքսերի $14\frac{1}{2}\%$ -ի չափով ցանել սերմանոցում ընտրված սերմացույով:

29. Արախիսի ցանքսը յերկու տարուց ավելի միևնույն տեղը չցանել և կրկնությունը կատարել 2—3 տարուց հետո:

30. Սերմացվի նորման ընդունել մեկ հեկտարին 40—50 կիլոգրամ կեղովուկ: Ըստ առանձին հողակտորների նորման ճշտել տեղում:

31. Արախիսի ցանքսը կատարել շաբաթերով, ակոսներով, շաբաթ-շաբաթից 70—80 սմ. և բույսը-բույսից 30—40 սմ. հեռավորությամբ քեշ հողում:

32. Սերմեր ցանել թիթե հողերում 4—8 սմ. խորությամբ, ծանր հողերում 4—6 սմ. խորությամբ:

33. Ցանքսի ժամկետ սահմանել ապրիլի 10—20-ը:

34. Վեգետացիայի ընթացքում արախիսի ցանքսերը քաղհանել, փխրեցնել 3—4 անգամ և բուկ տալ 2 անգամ, առաջին քաղհան-փխրեցումը կատարել շաբաթերը յերեալուն պես, 2-րդը՝ 10—12 որ հետո, յերրորդը՝ առաջին բուկից առաջ, չորրորդը՝ առաջին և յերկրորդ բուկի շրջանում:

Հետագայում քաղհան կատարել, յեթե յերևան մուլխոտերը: Աշնանը մնացած մուլխոտերը հեռացնել մինչև նրանց ծաղկալուծումը: Առաջին բուկը տալ ծաղկման շրջանում, յերկրորդ բուկը՝ առաջինից 15—20 որ հետո:

35. Արախիսի ցանքսը ջրել ըստ կլիմայական և հողային պայմանների, տեղիք չտալով լճացման և չորացման դեպքերի: Բերքահավաքից 20—25 որ առաջ դադարեցնել ջրելը:

36. Արախիսի դաշտերում հիվանդություններ

կամ ֆնասատուներ նկատվելու դեպքում, հայտնել ֆնասատուների դեմ պայքարող մասնագետներին և նրա ցուցմունքներով կազմակերպել պայքարը:

37. Արախիսի բերքահավաքը կատարել հոկտեմբերի 1—10-ը, արևոտ և չոր յեղանակին, լավ չորացնել և տեղափոխել պահեստ:

38. Սերմացուն առանձնացնելու ժամանակ ջրկել հիվանդները և ֆնավածները:

3. ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ ՅԵՎ ԲՈՍՏԱՆԱՅԻՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՅՔԸ

39. Բանջարանոցային և բոստանային կուլտուրաների համար առանձնացրված հողամասերն աշնանից վարել 20—25 սմ. խորությամբ 15—18 սմ. հողի քեշ վիճակում, գարնանը կատարել կրկնավար 15—18 սմ. խորությամբ, իսկ մոլախոտերով վարակված դաշտերում յերրորդ վար, բոլոր վարերի զուգընթաց ակոս առ ակոս հավաքել մոլախոտերի արմատները:

40. Բանջարանոցային և բոստանային կուլտուրաներին տալ լավ փտած գոմաղբ, հեկտարին 60—70 տոննա գոմաղբ աշնանից ցրտահերկերի տակ կամ գարնանից կրկնավարի տակ, իսկ վեգետացիայի ընթացքում տալ սնուցանում 1—2 տոննա:

41. Բանջարանոցային և բոստանային կուլտուրաները 2 տարուց ավելի մեկնույն տեղը չցանել և նույն տեղը ցանքս կրկնել 2—3 տարուց վոչ շուտ:

42. Ամեն տարի ունենալ բոլոր տեսակի բանջարանոցային և բոստանային կուլտուրաների հատուկ սենմաբուժական ցանքսեր, անհրաժեշտ քանակությամբ

ցանքսեր, տվյալ կոլխոզի և գյուղի բանջարանոցային սերմեր ապահովելու համար (տեսակավոր, տեղեկան և ընտիր):

43. Սածիլով զարգացող բանջարանոցային կուլտուրաների համար (սլամիդոր, բակլադժան, կադամբ, տաքտեղ և այլն) վաղ զարնանից նախապատրաստել և ցանել հատուկ սածիլանոցներ:

44. Բանջարանոցային և բոստանային կուլտուրաները վեգետացիայի ընթացքում քաղհանել, փխրեցնել 4—6 անգամ, մշտական ազատ պահելով դաշտը մոլախոտերից: Մոլախոտերը հանել յերևալուն պես և թույլ չտալ նրանց մեծանալուն կամ ծաղկման շրջանին հասնելուն:

45. Բանջարանոցային և բոստանային կուլտուրաները ջրել ըստ պահանջի խոսքափելով ավելցուկից:

46. Ցանկալի բանջարանոցներից բերքահավաքը կատարել վաղ առավոտյան և յերեկոյան հովին, թարմությունը չկորցնելու նպատակով:

Կատարել բերքի տեսակավորում և կազմակերպել տեղափոխումն այնպիսի տարաներով, վոր բերքը չփչանա և տեսքը չկորցնի:

47. Հիվանդություններ և վնասատուներ յերևալու դեպքում անմիջապես հայտնել հողբաժնին, կազմակերպելու պայքար վնասատուների դեմ, պայքարի մասնագետի ղեկավարությամբ:

48. Բերքահավաքից հետո դաշտից մաքրել, հավաքել բույսերի մնացորդները, ոգտագործել իբրև կեր, իսկ անպետքները վառել:

ԹԹԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Շրջանում թթաստաններ մշակող կուլեկտիվ տընտեսությունները, կոլտնտեսականները, մենատնտեսները և հիմնարկները պարտավոր են իրենց թթաստանները մշակել լրիվ և բարձր վորակով, կերտելով հետևյալ ազրոձեռնարկումները.

ԹԹԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐ ՅԵՎ ՆՈՐ ՏՆԿՈՒՄՆԵՐ

1. Թթենու մասսիվ տնկումների համար պետք է ընտրել այնպիսի հողեր, վորոնք քարքարոտ են և ճահճոտ չեն ու ապահովված են վորոգման ջրով: Ամենալավ հողերը համարվում են ավազախառն, թեթև ու կավաավաղային հողերը: Ընտրության ժամանակ նկատի ունենալով թթաստանի հետագա լայնացումը և ընտրել այնպիսի տեղեր, վորտեղ շրջապատում ազատ հողեր կան, հետագայում տնկումներն ընդարձակելու համար:

2. Նոր տնկումները պետք է կատարել այն հաշվով, վոր ապագայում հնարավոր լինի կատարել համայնական կերակրումներ, այն և ընտրել համատարած մասսիվներով կամ կոմպակտ գծային:

3. Մասսիվ կերպով կերի ֆոնդ ստեղծելու համիաժամանակ, թթենիները տնկել նաև առուների ափերին, տնամերձ տնտեսություններում, ճանապարհների շուրջը:

4. Համատարած մասսիվ թթենու տնկումների ընտրության ժամանակ պետք է նկատի ունենալ, վոր հողամասը չպետք է վարակված լինի բազմամյա մո-

լախոտերով և միանգամայն պետքական լինի թթենու աճման համար, ապահովված լինի բավարար քանակով վոռոգման ջրով:

5. Համատարած մասսիվներով բնավոր թթենիները տնկելու ժամանակ հերկը կատարել տնկելուց 1—1,5 ամիս առաջ, իսկ փոսերը փորել 0,5—0,5 մետր խորությամբ և լայնությամբ: Գարնան տնկումներին ժամանակ փորել աշնանը, աշնան տնկումների ժամանակ՝ ուշ գարնանը:

6. Առուների ափերին տնկելու ժամանակ, հաշվի առնել առվի ջրի բարձրությունը և հողի խոնավանալու հնարավորությունը, ծառի արմատային սխտեմի գտնվելու տեղում:

7. Բնավոր մասսիվ տնկումներին ղեպքում ծառերի հեռավորությունը պահպանել 3—1 մետր, նույնը անել նաև 3—1 մետր հեռավորության վրա տնկման ժականակ, միմիայն պատվաստելիս առաջին պատվաստից հետո պետք է առանց պատվաստելու թողնել վոչ թե 3 ծառ, այլ յերկուսը և նորից պատվաստել 3-րդ ծառը:

Ծառի գազաթի միամյա ճյուղերը պատվաստել 1—1,5 մետր բարձրության վրա: Շարքում գտնվող մնացած մյուս չպատվաստված ծառերը ձևավորել 50—60 սմ. բարձրությամբ: Միջարքային տարածությունը ոգտագործել բանջարանոցային և բոստանային կուլտուրաների համար, այն է՝ սոխ, արախիս, բադուկ, պամիդոր, վարունգ, սեխ, ձմերուկ, յերեքնուկ, առվույտ և վիկա:

Մանր վոռոգման առուների սխտեմի գծային տնկման ղեպքում, յերկկողմյան տնկումների ժա-

մանակ՝ 3 մետր, իսկ մի կողմանի ինչպես և ժաղիս-
տրալ ցանցի ղեպքում 2 մետր:

8. Տնկումները գարնանն ավարտել վոչ ուշ, քան
ապրիլի 15—20-ը, իսկ աշնանը՝ տերևաթափից սկսած
մինչև առաջին ցրտերը:

9. Տնկումից առաջ տնկիների արմատը կտրել
25 սմ. վոչ պակաս յերկայնությամբ, հեռացնելով վի-
րավորված արմատիկները:

10. Տնկելու ժամանակ, տնկիների արմատները
լավ դասավորել, նրա շուրջը հող ամրացնել, հատկել,
վոր տնկու արմատովիցը 2—3 սմ. բարձր լինի փոսի
մակերևութից և տնկելուց հետո անմիջապես ջրել:

11. Վեգետացիայի ընթացքում ջրել ըստ պահան-
ջի և քաղհանել ու փխրեցնել 3—4 անգամ:

ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԵՐԻ ՖՈՆԴԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ԱԳՐՈՄԻՋՈՑԱ- ՌՈՒՄՆԵՐԸ ԲԱՐՁՐԱԲՈՒՆ ՏՆԿՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

12. Աշնան կամ վաղ գարնան փոքրել թթենու
շուրջը 15—20 սմ. խորությամբ վոչ պակաս 1,25
մետր շառավիղով: Այդպիսի ղեպքում յեթե վաղը կա-
տարված և գարնանը, ամռան ընթացքում պետք և
կատարել փխրեցում: Աշնան վարի ղեպքում հողը
թողնել կոշտերով:

13. Ամառվա ընթացքում շարքային տնկվածք-
ներում և համատարած մասսիվներում, վորտեղ միջշար-
քային կուլտուրաներով չեն ոգտագործվում, հողը
փոքրել կամ վարել յերկու անգամ գարնանը և աշնա-

նը, իսկ ամառը տերեւաքաղից հետո անալալման հողը փխրեցնել:

14. Թթենին պարարտացնել գոմաղբով կամ կոմբաստով, տալով յուրաքանչյուր հեկտարին 40 տոննա (բացառութեամբ այն թթենիներին, վորոնք գտնվում են վոռոգման ցանցի շուրջը):

ՀԻՆ ԾԱՌԵՐԸ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱՅՆԵԼ

15. Յերիտասարդացումը կատարել վեգետացիայի ժամանակ, տերեւ ոգտագործելու ժամանակ, բայց վոչ ուշ, քան հունիսի 10-ը:

16. Բուռնցքածէ թթենին յերիտասարդացնել, հեռացնելով բուռնցքը (կտրել բուռնցքից 10—15 սմ. ցած):

17. Առաջին հերթին յերիտասարդացնել այնպիսի ծառեր, վորոնց տերեւները կտրված են (բլթակավոր ու անվորակ):

18. Այն ծառերը, վորոնք ունեն մեկ բուռնցքային ձև, անհրաժեշտ ե ձևափոխել բազմաբուռնցքի (կերակրման ոգտագործման ժամանակ), թողնելով բուռնցքի վրա 3—5 ճյուղ, հետագա աճման նպատակով:

19. Բարձրաբուռնները վերանորոգելու ժամանակ պատվաստել պակաս արժեք ունեցող վայրի թթենիները, կուլտուրական տեսակներով: Պատվաստը կատարել միամյա ճյուղերի հիմքից, վաղ գարնանը բողբոջելուց 20—25 որ հետո:

20. Մինչև վեգետացիայի սկիզբը, թէ բուռնցքը և թէ բունը մաքրել, հեռացնելով բոլոր չորուկները, կեղտը և այլն: Ուղղել նախկին ոգտագործման ժամանակ անկանոն կտրվածքները:

21. Այն ծառերը, վորոնք վարակված են մամուռով, արեթասնկերով և քարաքոսով, մաքրել և բներին քսել կիր:

22. Թթենիներն ոգտագործելու և խնամելու ժամանակ աշխատանքները կատարել բացառապես այգու գործիքներով (սեկտար, այգու դանակ և այգու սղոց) խոշոր ճյուղերը սղոցով կտրելուց հետո, հարթել այգու դանակով և քսել կավահողի և կովի աղբի խառնուրդի մածիկ:

23. Թթենու այն ճյուղերը, վորոնք վարակված են յեղել բակտերիոզով, վորդերին կերակրելուց հետո անպայման այրել:

Ժանգացավով վարակված տերևները, աշնանը հավաքել և այրել:

24. Վորդերին կերակրման համար պատրաստած կերը (տերևը—ճյուղերը) չկեղտոտել, պահպանել հով և չոր շենքում, չթողնել վոր չորանա:

25. Կերակրման առաջին շրջանում տերևահավաքը կատարել՝ տերևները քաղելով հատ-հատ, 2-րդ և 3-րդ շրջանում կտրել բների վրա գազաթի մեջ գրտնըվող մանր ճյուղերը, իսկ 4-րդ և 5-րդ շրջանում կտրել բոլոր ճյուղերը:

Յ Ա Ն Ք

26. Յանքի համար նախատեսված հողը պետք է լինի փափուկ, պարարտ, ունենա հարթ մակերես, ապահովված լինի վոռոգման ջրով, պետք է լինի լավ բուսավորված և պաշտպանված, վորպեսզի տնասունները ցանքսը չփչացնեն:

27. Հողը պետք է մշակել աշնանից, վարելով
30 սմ. խոր:

28. Գարնանը հողի քեշը գալու ժամանակ պետք
կրկնավարել:

29. Հողը վարելուց կոշտերը փխրեցնել, քարերը
և մուխոտների մնացորդները դաշտից դուրս տանել:

30. Ցանքսը պետք է կատարել մարգերով, շար-
քացան և ժապավենաձև:

31. Մարգերի մեծությունը կարելի չե ընդունել
2—3 մետր յերկայնությամբ և մեկ մետր լայնությամբ:
Ցանքը կատարել—մարգերի մեջ քաշելով աղոմներ ըստ
լայնության, 20—25 սմ. հեռավորությամբ: Ցանել
0,5—1,0 սմ. խորությամբ:

32. Նախ քան ցանելը մեկ անգամ պետք է ջրել,
վորպեսզի ստուգվի թե թմբի վրա ջուրը մինչև վոր-
տեղ ե բարձրանում և սերմը ցանել թմբի յերկու կող-
մերում, այնպիսի բարձրությամբ, վոր խոնավությու-
նը ծծվի և հասնի թթնու սերմերին:

33. Ցանքսը պետք է կատարել գարնանն ապրիլ
ամսվա կեսից մինչև մայիսի սկիզբը այն ե 15/IV—1/V:

34. Ինչպես ասացինք, սերմերը պետք է ցանել
թմբերի յերկու կողմերից նրա լանջին: Ցանքսի խո-
րությունը, նայած հողի տեսակին, կարելի չե ընդու-
նել 0,5-ից—1,0 սմ.:

35. Յեթե հողը ծանր ե և կեղևակալում ե պետք
ե ցանել յերեսանց, թեթև, փափուկ և վոչ կեղևակա-
լող հողերում ցանել մի քիչ խոր: Սերմը ցանելուց
հետո պետք ե ծածկել հողի փափուկ շերտով: Լավ ե
յեթե այդ հողի հետ խառնված լինի լավ հասունացած
դոմաղը:

36. Յանելուց անմիջապես հետո պետք է ջրել: Առուններով ջուրը պետք է բաց թողնել այնքան մինչև ամբողջ թումբը խոնավանա և ջուրը ծծի իր մեջ: Մինչև ծիլերի յերևալը և կանոնավոր ամրանալը հողը միշտ պետք է պահել խոնավ դրությամբ: Դրա համար անհրաժեշտ է ջրել յուրաքանչյուր ուրը և կամ թե ամենաուշը յերկու ուրը մեկ անգամ, յեթե մինչև ջրելը հողը չի չորանում:

37. Սերմը ծլելու և ծլերի պահպանման նախապայմանը անպայման հողը խոնավ պահելն է, մինչև ծլերի ամրանալը հողը յերբեք չպետք է չոր լինի:

38. Զուրն առունների մեջ չպետք է բաց թողնել մի անգամից ուժեղ հոսանքով, այլ դանդաղ և հավասար, փորպեսզի թմբերը կանոնավոր ջրվեն:

39. Ծլերն ամրանալուց հետո, ըստ պահանջի, պետք է ջրել 3—4 ուրը մեկ անգամ և վորքան տնկիները մեծանում են այնքան կարելի յե ջրել ուշ ուշ, բայց հողը լինի միշտ խոնավ:

40. Վոռոգման այս կամ այն քանակը կախված է հողային և կլիմայական պայմաններից և նրանից— թե վոռոգումից հետո ինչպես են մշակում հողը, քանի անգամ են փխրեցնում և մոլախոտերը քաղհանում, փորովհետև ինչպես հայանի յե, վոռոգումից ել հետո գոյացող կեղևի շերտը ժամանակին չփխրեցնելուց ջուրն աննպատակ գոլորշիանում է և թթենին զրկվում է խոնավությունից, նայած հողի վոռոգումից: Յերկու յերեք ու հետո պետք է հողը փխրեցնել գոյացած կեղևակալած շերտը քայքայելու համար:

41. Վեգետացիայի ընթացքում, թե առուների և թե թմբերի վրա տնկիների մեջ շարքերը պետք է փխրեցնել ձեռքի ուրազով: Առուների մեջ հողը պետք է փխրեցնել 5—6 անգամ. մթերի վրա՝ 2—3 անգամ:

42. Վորպեսդի մոլախոտերը չխեղդեն նորածիլ թթենիներին և վերջինները հնարավորութուն ունենան լավ զարգանալու, ինչպես և շուրջ աննպատակ չգոլորշիացնելու համար անհրաժեշտ է դաշտը մաքրել մոլախոտերից: Նրանց առաջին քաղհանը պետք է կատարել հենց վոր յերևում են մոլախոտերը, չսպասելով թթենու ծլելուն:

43. Վեգետացիայի ընթացքում, նայած նրանց թե մոլախոտերը ինչ աստիճան են զարգանում անհրաժեշտ է քաղհանել 4—5 անգամ:

44. Յանքսի բաժանմունքում բուսակները պետք է աճեցնել մեկ տարի և ստանալ մեկ հեկտարից 600.000 հատ, վորից առաջին տեսակի 50⁰/₀-ը:

Տ Ն Կ Ա Ր Ա Ն

45. Տնկարանի հողերի ընարությունը պետք է կատարել այնպես, ինչպես ցանքսի համար (տես ցանքսը):

46. Տնկարանի հողերը աշնանը վարել 30 սմ. խորությամբ:

47. Գարնանը կնկնավարել, քարերը մաքրել և փոցիսել զիգ-զագ փոցխով:

48. Պարարտացնել գոմաղբով, աշնանը տալով հեկտարին 40 տոննա գոմաղբ:

49. Մինչև տնկելը տնկիները պատրաստել,

մաքրել արմատային սիստեմը վերավոր մասերից, արմատը թողնելով 20 սմ. յերկարությամբ:

50. Տնկել գարնանը ապրիլի 10-ից մինչև վերջը:

51. Տնկել շարքերով, վոչ պատվաստի ժամանակ տնկել մեկ հեկտարին 50.000 հատ միջշարքային տարածությունը պահպանելով 80 սմ., շարքամիջային տարածությունը 25 սմ.:

52. Պատվաստելու դեպքում տնկել հեկտարին 40.000 հատ. տարածությունն ընդունելով 80 սմ., 30 սմ.:

53. Տնկելու ժամանակ արգելել ունկնդացիայի յենթարկել այն տունկերը, վորոնց տերեւները խիստ կտրտված են (բլթակավոր) այդպիսիներն ոգտադործել իբրեւ պատվաստակալ վրան կուտուրական տեսակներ պատվաստելու:

54. Պատվաստը կատարել գարնանը, բողբոջելուց 20—25 ուր հետո, արթնացող աչքով գարնանը պատվաստած, բայց չկտրած աչքերը պետք է վերապատվաստել, ամառն աճող աչքով մինչև հուլիսի մեկը:

55. Տնկիները տնկելուց անմիջապես ջրել վեգետացիայի ընթացքում 12—14 անգամ նայած հողին, ամսական 2—3 անգամ:

56. Վերջին ջուրը տալ սեպտեմբերի 15-ին և դադարեցնել ջրելը:

57. Հողը փխրեցնել առաջին տարին 4—5 անգամ, իսկ յերկրորդ տարին՝ 3—4 անգամ:

58. Մոլախոտերը քաղհանել առաջին տարին 3—4 անգամ, յերկրորդ տարին՝ 2—3 անգամ:

59. Չկտրվածների նորմալ թիվը ընդունել 95%:

60. Մինչև պատվաստելը տնկիչները մաքրել
ավելորդ ճյուղերից:

61. Պատվաստացվի (կտրոն) համար ընտրել մի-
միայն շվեր. շվերը կտրել առավոտյան և յերեկոյան
հովիւն:

62. Պատվաստելու շվերը փաթաթել խոնավ շո-
րում կամ դնել ջրով դուլի մեջ:

63. 15 օրից հետո պատվաստները ստուգել: Ձը-
կավածները վերապատվաստել, իսկ կպածների կապե-
րը թուլացնել յեթե ամուր ե և ընդհակառակը նորից
կապել յեթե թուլացած ե կաժ ընկել ե:

64. Աչքերը պետք ե կպնեն առնվազն 90%-ով:

65. Պատվաստը կապել վայրի շվին, վայրի շիվը
ծայրից կտրել: Վեգետացիայի ընթացքում մաքրել
վայրի բնից դուրս յեկած բոլոր շվերը և միշտ թող-
նել մաքուր:

ՏՆԿԻՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Տնկիչները տնկարանում պետք ե աճեցնել և դար-
դացնել յերկու տարվա ընթացքում, պատվաստած
տնկիչները յերեք տարում:

Առաջին տարին.—

68. Բուսակները տնկելուց հետո կտրել ցողու-
նը, վրան թողնելով յերկույ-երեք բողբոջ կամ մոտա-
վորապես 5—8 սմ. յերկարությամբ, իսկ պատվաստի
դեպքում 10—15 սմ.:

69. Մայիսին կամ հուլիսին բնի վրա դուրս յե-
կած ճյուղերից մեկը, ամենաուժեղն ու առողջը, թող-
նել, իսկ մնացածները կտրել:

70. Ամառվա ընթացքում ընտրած ճյուղերի վրա գուրս յեկած շվերը պետք է կտրել այնպես, վոր բնի վրա այդ վոստերն ունենան 5—10 սմ. յերկարություն (պինցերովկա): Ոգոստոս ամսվա ընթացքում հեռացնել տունկի վայրի մասը, վորին կապած է պատվաստը:

Յերկրորդ օտրին.—

71. Յերկրորդ տարին թթենուն տալիս են պսակի ձեւովորում, դրա համար ա) մայիսին տնկու լավ դարգացման դեպքում ապրիլին կատարել բնի մաքրում. բ) մայիսին կտրել ծառի բնի $\frac{1}{3}$ մասի վրա գտնվող բոլոր շվերը սկսած հիմքից. գ) 10 որից հետո կտրել բնի միջի $\frac{1}{3}$ մասի շվերը. դ) դրանից դարձյալ 10 որ հետո կտրել բնի վերին մասում գտնվող շվերը, թողնելով գազաթին 3 ամենալավ ճյուղերը:

72. Հեկտարից ստանալ ստանդարտ մատերիալ, վոչ պատվաստի դեպքում 40.000 տունկ, պատվաստի դեպքում՝ 25.000 տունկ:

73. Տնկարանից ստացվող տնկիները պետք է ունենան արմատային սիստեմ վոչ պակաս քան 30 սմ.:

74. Բնի յերկարությունը մեկ մետր:

75. Գազաթի հիմնական ճյուղերը 25—30 սմ.:



A. 1938

АКТ № 146

Вступил в

Տեղ. խմբագիր՝ Խ. Վաչե
Սրբագրիչ՝ Վ. Խատրյան

Պետհամարայնի Հրատարակչության տպարան, Տեղյան փ. 72
Գլխավոր խմբագիր Հ—3502: Պատ. № 378: Տիրաժ 1000:

569-54



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0043195

99 [22x]

A $\frac{I}{7293}$